ՀԱՐԻՆԵ ՍԱՌԱՋՅԱՆ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԸ ԵՎ ՊԱՆԹԵԻԶՄԸ

(Նորագույն շրջանի հայ գրականություն)

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Ստեփանակերտ
2019

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԻՆԵ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՌԱՋՅԱՆ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԸ ԵՎ ՊԱՆԹԵԻԶՄԸ

(Ստրաւգոյն շրջանի հայ գրականություն)

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Ստեփանակերտ-2019

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)
Ս 210

Տպագրվում է ԱրՊՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝ Սոկրատ Խանյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ Գիտության վաստակավոր գործիչ

Գրախոսներ՝ Անահիտ Աթայան
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
ԼՂՀ Գիտության վաստակավոր գործիչ

Արմեն Ավանեսյան
բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

Սառաջյան Զ. Գ.
Ս 210 Համո Սահյանը և պանթեիզմը: Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Զ. Գ. Սառաջյան.- Ստեփանակերտ: Արցախի պետական համալսարան, 2019.- 104 էջ:

«Համո Սահյանը և պանթեիզմը» ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգի բանասիրական ֆակուլտետի ուսանողների, հանրակրթական դպրոցների գրականության ուսուցիչների և, առհասարակ, սահյանագիտությամբ հետաքրքրվողների համար: Ձեռնարկում հեղինակն ընդգրկում է մեծ բանաստեղծի գրական ժառանգության առավել առանցքային դրույթներն ու տեղեկությունները և ցույց տալիս, որ նրա քնարերգությունն իր բնապաշտական, իմաստասիրական, հումանիստական շերտերով մեծ ներդրում է ոչ միայն հայ, այլև համաշխարհային պոեզիայում:

Դասընթացի բովանդակությունը կազմվել է ԱՀ եւ ՀՀ բուհական ծրագրերին համապատասխան:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-9939-1-1016-5
© Արցախի պետական համալսարան, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….…….... 5

Դասընթացի թեմատիկ պլան……...…. 8

Ի. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Թեմա1. Համո Սահյանը՝ բնապաշտ գրող…….……..10

1.1. «Պանթեիզմ» հասկացությունը……..10

1.2. Բանաստեղծի աշխարհընկալումը……..... 10

Թեմա 2. Հայրենիքը՝ բնապաշտական երկերում……..….. 16

2.1. Պատմական ճակատագիրը…….....….. 16

2.2. Ժամանակի տագնապները……...…...…… 16

Թեմա 3. Մարդու ներաշխարհի բացահայտումը բնության միջոցով……. 28

3.1. Մարդու և բնության հարաբերությունը…….....… 28

3.2. Բնությունը՝ մարդուն ազնվացնող երևույթ……. 28

Թեմա 4. Բառի գեղագիտությունը……...……...…. 35

4.1. Գույնը, բույրը, ձայնը՝ Հ. Սահյանի բնապաշտական երկերում որպես գեղագիտական միավորներ……..… 35

4.2. Բառ-խորհրդանիշներ……...……..……... 35

Թեմա 5. Հ. Սահյանը և գրական առնչությունները…..…… 50

5.1. Գրական առնչություններ ……..…….. 50

5.2. Համո Սահյանը և թարգմանական արվեստը…… 50

II. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուները..… 63

2. Հայրենիքի պատմական ճակատագրի գեղարվեստական արտացոլումը Հ. Սահյանի պոեզիայում……..… 64

3. Հ. Սահյանի բնապաշտական պոեզիան՝ որպես հայրենիքի առջև ծառացած խնդիրների արձագանք…..… 65

4. Հ. Սահյանի բնապաշտական պոեզիայի արդիական ընկալումները……... 65

5. Գրականագիտությունը՝ Հ. Սահյանի մասին…… 66

III. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Պարտադիր ընթերցանության ցանկ…… 68

Ռեֆերատների թեմաներ……..… 69

Ինքնաստուգման թեստեր……..… 70

Թեստերի պատասխաններ……... 85

Ինքնաստուգման հարցաշար……..… 85

Քննական հարցաշարի օրինակ……... 94

IV. ՀԱՎԵԼՎԱԾ

Մատենագիտություն……..…… 97

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…..… 99

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Համո Սահյանը և պանթեիզմը» ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգի բանասիրական ֆակուլտետի ուսանողների, հանրակրթական դպրոցների գրականության ուսուցիչների և, առհասարակ, սահյանագիտությամբ հետաքրքրվողների համար: Դասընթացի բովանդակությունը կազմվել է ԱՀ և ՀՀ բուհերի ծրագրերին համապատասխան: Դասընթացն Արցախի պետական համալսարանում նախատեսված է «Հայ գրականության պատմություն» մասնագիտացմամբ մագիստրատուրայի առաջին կուրսի երկրորդ կիսամյակի համար՝ կամընտրական դասընթացների շրջանակում:

«Համո Սահյանը և պանթեիզմը» դասընթացի ուսումնական ծանրաբեռնվածությամբ նախատեսված լսարանային ժամաքանակը սահմանափակ է, ուստի ուսումնամեթոդական սույն ձեռնարկում ընդգրկվել են առավել առանցքային դրույթներն ու տեղեկությունները:

Դասընթացն ունի հետևյալ **նպատակները.**

- ուսումնասիրել նորագույն շրջանի հայ գրականության նշանավոր բանաստեղծ Համո Սահյանի պոեզիան՝ պանթեիստական, ասել է թե՝ բնապաշտական լույսի ներքո, վեր հանել նրա բնապաշտական երկերի գեղարվեստական, գեղագիտական, փիլիսոփայական շեշտադրումները,
- Հ. Սահյանի պոեզիայի միջոցով ձևավորել և խորացնել հետաքրքրությունը դեպի գեղարվեստական երկն ու գրականությունը, ձևավորել գրական երկն ինքնուրույն վերլուծելու և գնահատելու կարողություն, ճանաչել, ընդունել ազգային և համամարդկային արժեքներ:

Նշված նպատակների իրականացման համար դասընթացն առաջադրում է հետևյալ **խնդիրները.**

- Ուսումնասիրել Համո Սահյանի գրական ժառանգությունը, պանթեիզմը՝ որպես կրոնափիլիսոփայական ուսմունք և դրա դրսևորումները գրականության մեջ:
- Ունենալ հստակ պատկերացում բանաստեղծի ապրած ժամանակաշրջանի, ժամանակի խնդիրների, գրական ընթացքի մասին:
- Կատարել գրականագիտական տարբեր վերլուծություններ:

Դասընթացի վերջում ուսանողը պետք է **իմանա.**

- ինչ է պանթեիզմը և դրա դրսևորումը Հ. Սահյանի պոեզիայում,
- Համո Սահյանի գրական ժառանգությունն իր բնապաշտական, իմաստասիրական, հումանիստական շերտերով,
- բանաստեղծի գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները,
- տեղն ու դերը հայ գրականության մեջ,
- համաշխարհային առնչությունները:

Ուսանողը պետք է **կարողանա.**

- ինքնուրույն վերլուծել և գնահատել գրական երկը,
- ցույց տալ գրական երկի կապը գրականության զարգացման պատմության հետ,
- ցույց տալ գրական երկում առաջադրված գաղափարական խնդիրները,
- տալ գրական երկի արդիական ընկալումների գնահատականը:

Ուսումնամեթոդական ձեռնարկն ունի երեք հիմնական ուղղվածություն՝

- տեսական

- գործնական
- ինքնուրույն աշխատանքների:

Տեսական մասում ընդգրկված է առարկայական նկարագրին համապատասխան դասախոսությունների հիմնադրույթները: Յուրաքանչյուր դասախոսություն մշակված է ըստ ծրագրային հիմնահարցերի: Դասախոսությունները բովանդակային առումով ունեն տրամաբանական հաջորդականություն և համալրվում են դիտողական պարագաներով /տեսանյութեր, սահիկներ/:

Գործնական մասում ընդգրկված են հարցեր, որոնց շուրջ քննարկումներով, բանավեճերով և ընթերցումներով իրականացվում են գործնական պարապմունքները:

Ինքնուրույն աշխատանքների բաժինը, որտեղ առանձնացված են պարտադիր ընթերցանության ցանկը, ռեֆերատների թեմաները, ինքնաստուգման թեստերը, թեստերի պատասխանները, ինքնաստուգման հարցաշարը, քննական հարցաշարի օրինակը, նպատակ ունի նախաքննական շրջանում ստուգել ուսանողի պատրաստվածությունը:

Դասընթացի ընթացքում հանձնարարվում է նաև հետևյալ ֆիլմերի դիտում.

1. «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս» (փաստագրական ֆիլմ Համո Սահյանի մասին):
2. «Մեր մեծերը. Համո Սահյան»:

Ձեռնարկում ներկայացված գրականության ցանկն առաջադրվում է գործնական պարապմունքներին և քննություններին նախապատրաստվելու համար:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

N	Թեմա	Դասա-խոսու-թյուն	Գործ-նական	Ան-հատ.
1	Համո Սահյանը՝ բնապաշտ գրող	2	2	4
1.1	«Պանթեիզմ» հասկացությունը			2
1.2	Բանաստեղծի աշխարհընկալումը			2
2	Հայրենիքը՝ բնապաշ-տական երկերում	2	2	4
2.1	Պատմական ճակատագիրը			2
2.2	Ժամանակի տագնապները			2
3	Մարդու ներաշխարհի բացահայտումը բնության միջոցով	2	2	4
3.1	Մարդու և բնության հարաբերությունը			2
3.2	Բնությունը՝ մարդուն ազնվացնող երևույթ			2
4	Բառի գեղագիտությունը	2	2	4
4.1	Գույնը, բույրը, ձայնը՝ Հ. Սահյանի բնապաշ-տական երկերում որպես գեղագիտական միավորներ			2
4.2	Բառ- խորհրդանիշներ			2
5	Հ. Սահյանը և գրական առնչությունները	2	2	4

5.1	Համո Սահյանը և ռուս գրականությունը			2
5.2	Համո Սահյանը և արտասահմանյան գրականությունը			2
6	Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուները		2	4
7	Հայրենիքի պատմական ճակատագրի գեղարվեստական արտա-ցոլումը Հ. Սահյանի պոեզիայում		2	4
8	Հ. Սահյանի բնապաշ-տական պոեզիան՝ որպես հայրենիքի առջև ծառացած խնդիրների արձագանք		2	4
9	Հ. Սահյանի բնապաշ-տական պոեզիայի արդիական ընկալումները		2	4
10	Գրականագիտությունը՝ Հ. Սահյանի մասին		2	4
		10	20	60

Ի. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Թեմա 1
Համո Սահյանը՝ բնապաշտ գրող

1.1. «Պանթեիզմ» հասկացությունը

1.2. Բանաստեղծի աշխարհընկալումը

Ա. «Պանթեիզմ» հասկացությունը: Պանթեիզմը կամ համաստվածությունը փիլիսոփայական ուսմունք է, որը «աստծուն» նույնացնում է տիեզերքի հետ: Ըստ այդ ուսմունքի՝ բնությունը, տիեզերքը և աստվածը նույնն են, մեկը մյուսին համարժեք են:

Պանթեիզմի մեջ արտահայտված է այն հայեցակարգը, որ Աստված ավելի լավ հասկացվում է Տիեզերքի հետ միավորմամբ: Պանթեիզմի մեջ առկա են տարբեր ուղղություններ, որոնք, սակայն, ունեն կենտրոնական նույն գաղափարները, դրանք են՝ Տիեզերքի համապարփակ միասնություն և բնության սրբություն: Պանթեիզմի առաջին խոշոր տեսաբանը Նիկոլայ Կուզանացին է /1401-1464/, որը բնությանը վերագրում է Աստծուն հատուկ բացարձակ հատկություններ: Ըստ նրա՝ Աստված և աշխարհը, արարիչն ու արարվածը, պատճառն ու հետևանքը համադրվում են և վերածվում մեկ միասնության: Ինչպես որ Աստված է աշխարհի մեջ, այնպես էլ աշխարհը նրա մեջ է: Մարդը, ըստ Կուզանացու, փոքր տիեզերք է, տիեզերքի խտացված էությունը:

Պանթեիզմի աշխարհընմբռնումը իր նոր հիմնավորումը գտավ Վերածննդի բնափիլիսոփայության մեջ: Բնապաշ-

տական պանթեիզմի՝ որպես միասնական տեսության հիմնադիր է համարվում Վերածննդի բնափիլիսոփայության խոշոր մտածող Ջորդանո Բրունոն: Բրունոյի բնապաշտական պանթեիզմի մեջ տիեզերքը աստծո և բնության, նյութի ու ձևի, վերջավորի և անվերջի, փոփոխելիության և կայունության միասնությունն է: Նա գերակայություն է տալիս բանականությանը և իր պանթեիստական փիլիսոփայության կենտրոնում կանգնած է բանական մարդը, ակտիվ ու գործուն անհատը[1]:

Պանթեիզմն իր դրսևորումն ունեցավ նաև գրականության մեջ: Մարդու և բնության միասնության, բնության պաշտամունքի, բնության միջոցով մարդու և մարդկայինի բացահայտման լավագույն վկայություն է Համո Սահյանի պոեզիան, որն իր ամբողջությամբ կարելի է անվանել բնապաշտական: Գրականագետ Շչորս Դավթյանը իր «Համո Սահյանի կյանքը և գործը» գրքում հերքում է Սահյանի պոեզիայում պանթեիզմի գոյությունը, մինչդեռ գրականագետ Մելս Սանթոյանը փաստում է, որ Համո Սահյանի պոեզիայում դրսևորվում է պանթեիզմի նոր որակը՝ սահյանականը:

«Բնության երևույթների աստվածացման ո՛չ հին տեսակն է պաշտամունքի առարկա դարձնելու միտումը, այլ բնության երևույթների «բանականացման», նրանց էականի մեկնության և պոետական բարդ պատկերավորման պայմանականության՝ հիպերբոլիկ մետաֆորի (չափազանցված փոխաբերություն) օգնությամբ»,- նշում է Մ. Սանթոյանը[2]:

Բ. Բանաստեղծի աշխարհընկալումը: Սահյանի աշխարհընկալման առանձնահատկությունն այն է, որ նրա եր-

---

[1] *Հակոբյան Ս.Մ., Փիլիսոփայության տեսություն և պատմություն, «ԱՀԱ Պոլիգրաֆ», Երևան, 2009, էջ 99:*

[2] http://www.grakantert.am/archives/5544

գի ժամանակը հավիտենությունն է: Եվ այդ տարածաժամանակային անսահմանության մեջ մարդը քննության է ենթարկվում՝ զուգահեռվելով բնության հետ: Այստեղ բնության յուրաքանչյուր երեւույթ մարդկային բնավորության գիծ է, մարդկային էության որակ: Նրա պատկերած բնությունը հավիտենական փոխկանչ է բնության եւ մարդու, արտաքին աշխարհի եւ մարդու ներաշխարհի համադրություն, նաեւ՝ հակադրություն քաղաքակրթված մարդու եւ բնության: Բանաստեղծի տարածաժամանակային անսահմանության մեջ տողը տիեզերական խորհրդով է շնչում: Բանաստեղծը մարդու հուզազգացական աշխարհը՝ իր խոհերով, հույզերով, հոգսերով ու ապրումներով, գծագրում և ամբողջացնում է բառ-պատկերներով, որոնք նրա պոեզիայում արտացոլվում են բնության պատկերների միջոցով՝ օժտված սահյանական ընկալումներին բնորոշ ձայներով, շշուկներով, գույներով, բույրերով: Պոետն ստեղծում է հայրենի բնաշխարհը պատկերող բանաստեղծական կոլաժ կամ համանվագ, որի առանցքը մարդն է՝ իր ճակատագրով, «հույսերից շիկացող», «աշխարհի լայնություններով լցված»:

Աշխարհն իմ մեջ է, եւ ես՝ աշխարհի,
Զրույց ենք անում աշխարհը եւ ես,-
Եվ ոչ ոք չկա, որ մեզ խանգարի,
Եվ ոչինչ չկա, որ խանգարի մեզ[3]:

Եվ «ծեր ու ծծկեր» աշխարհի հետ զրույցի բռնված բանաստեղծն աշխարհի հավերժության մասին խոսք է ասում՝ իր կյանքը համարելով ընդամենը մեկ վայրկյան դարերի

---

[3] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 296:*

հավերժության մեջ՝ ինքը դառնալով այդ հավիտենության ուղեկիցն ու կրողը: Այստեղ է, որ հավիտենության աշխարհայացքային ըմբռնումը դառնում է գեղագիտական ու ստեղծագործական խոհերի շարժառիթ:

Յուրատիպ բացահայտումներ են բանաստեղծի ինքնախոստովանական մենախոսությունները, որոնք ուրույն մտածողության ու դիրքորոշումների ընդգծված դրսևորումներ են: Բանաստեղծի գեղագիտական ըմբռնումներն ու աշխարհայացքը արտահայտված են ներքին խոսքի ու խոստովանության լեզվով: Սա ինքնաներկայացման, գեղագիտական իրացման ինքնատիպ ձևաչափ է, որն, ի դեպ, հաճախակի է կրկնվում նրա տարբեր ստեղծագործություններում: Այս և ինքնախոստովանության մոտիվով կառուցված շատ ու շատ բանաստեղծություններ դառնում են Սահյանի ապրումների փորձի ու սեփական անձի մեկնության բնութագրություններ:

Երգ իմ, նման ես քո ստեղծողին,
Նրա պես անշուք ու հասարակ ես,
Նրա պես անփույթ, բայց եւ հավաք ես,
Արտաքուստ այնպես խեղճ ու կրակ ես,
Ներքուստ կրակ ես ամբողջովին[4]*:*

Անհնար է խոսել բանաստեղծի աշխարհընկալման մասին՝ առանց հայացք ձգելու նրա մանկությանը, որտեղ էլ սկսել են սաղմնավորվել աշխարհը ճանաչելու նրա հայացքները: Ավելին կարելի է ասել. Սահյանի պոեզիան ակունքվում է նրա մանկությունից: Հարցազրույցներից մեկում բանաստեղծն ասել է. «Մանկությունս եղել է շա՛տ աղքատ,

[4] *Սահյան Հ., Երկեր, հ. 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 206:*

բայց կուզենայի կրկնվեր: Եղել է հեքիաթ բնության մեջ: Ես շատ բան սովորեցի, երբ մենակ էի ու գառներ էի արածեցնում. քարը, խոտը, ծաղիկը, ծառը, ժայռը, ջուրը ամբողջ օրը զրուցում էին ինձ հետ: Զարմանալի բան է մանկությունը: Պոեզիան ստեղծվում է, իմ կարծիքով, դրանից ու եթե մարդ ազնիվ է ապրում իր կյանքը, ինչքան էլ երկար ապրի, եթե չի վաճառում իր մանկությունը, մինչեւ վերջ էլ մնում է մանուկ, եւ այդ մանկության լույսն օգնում է նրան՝ աշխարհի հետ լինելու մտերիմ, հարազատ, ազնիվ, լուսավոր»[5]:

Իհարկե, այստեղ մանկությունը զուգորդված է մաքրության ու շիտակության հետ, ինչն ընդգծում է բանաստեղծի ընդդիմությունը կամ դիրքորոշումների հակադրությունը ներկայի իրողությունների հետ:

Որքան մենք խորամուխ ենք լինում Սահյանի պոեզիայի մեջ, այնքան առնչվում ենք ոչ միայն բնության, այլև մարդու էության բացահայտման ու ճանաչման մտահայեցողական բանաձևումներին, որի արդյունքում բանաստեղծի գեղարվեստական մտածողությունը թե՛ մարդկային անհատական ու թե՛ ընդհանրացված կերպարների վերարտադրությունը դարձնում է դիպուկ ու անշեղ:

«Հայաստանում այն թյուր կարծիքը կար,- նշել է Էդուարդաս Մեժելայտիսը,- թե Համո Սահյանը սոսկ բնության բանաստեղծ է: Սակայն բնությունը Սահյանի մոտ պոեզիայի, ցավի, ուրախության ու հրճվանքի վերածված այնպիսի միագումար է, որին պետք է ոչ թե պահանջներ ներկայացնել, այլ՝ ենթարկվել: Այդպես հնազանդվում ես ուսերիդ իջնող ջրվեժին, հայրական հոգնած աջին, հոգսի՝ քո

---

[5] *«Գրական թերթ», 5 հունիս, 2009, էջ 3:*

հասանելիք բեռին: Նրա համար մետաֆորը, յամբը եւ ալեգորիան այդ բնությունը օժտում են մի պատրանքով, որ որքան անհավանական է, նույնքան հավաստի, որքան անբնական, նույնքան անառարկելի»[6]:

Սահյանը փիլիսոփա բանաստեղծ է: Եվ նրա բնապաշտական երկերում ներկայացված է մարդու ներաշխարհի հոգեբանական քարտեզագրությունը: Այնպես որ, պոետի տողերում տեսնել միայն առարկայական պատկերներ, նշանակում է չնկատել գլխավորը: «Սահյանը մոտ է կանգնած բնությանը,- այս առումով նկատում է գրականագետ Աիդա Հայրապետյանը,- սակայն առավել մոտ է նրա հոգուն մարդը: ...Բնություն եւ մարդ - սա է Համո Սահյանի բանաստեղծության տարերքը»[7]: Նրա երկերում մարդն ու բնությունը միասնական են, անբաժանելի: Բանաստեղծի երգերում բնության յուրաքանչյուր մասնիկ շնչավորված է մարդկայինով, կենտրոնում մարդն է՝ իր ապրումներով, փորձով, ձեռքբերումներով ու կորուստներով, հրճվանքով ու ցավով, ուրախությամբ ու տառապանքով:

Ինչ էլ երգի տողը,
Հոգուս մատը խառն է,
Մինչեւ անգամ ծառն էլ
Հոգուս մի պատառն է[8]*:*

---

[6] *Դավթյան Շ., Համո Սահյան, Բանաստեղծը, Մարդը, Մտածողը, «Վան Արյան», Երեւան, 2001, էջ 110:*
[7] *Հայրապետյան Ա., Բնությունը և մարդը Համո Սահյանի պոեզիայում, Երեւան, «Լույս», 1974, էջ 6:*
[8] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 149:*

Թեմա 2
Հայրենիքը՝ բնապաշտական երկերում

2.1.Պատմական ճակատագիրը

2.2. Ժամանակի տագնապները

Ա. Պատմական ճակատագիրը: Հայրենիքի ճակատագիրը Սահյանի քնարերգության մեջ առանձնահատուկ տեղ ունի: Հայաստանը բանաստեղծի համար հավերժության ճամփորդ է:

Հայրենիքին նվիրված բանաստեղծություններում բանաստեղծի աշխարհայացքը դառնում է գաղափարախոսություն: Հայաստանին նվիրված պոեզիան բարդ աշխարհաքաղաքական ժամանակներում ապրող փիլիսոփա-գեղագետի խորաթափանց հայացք է.

Ինչի՞ց է, որ Հայաստանում
Ձրերը չեն հանգստանում[9]

Հարցադրմանը հետեւում է պատասխանը.

- Ինչպե՞ս, ինչպես հանգստանան,
Երբ հայրենի լեռների մեջ
Նրանք չունեն ապաստարան…
Եվ գնում են ապաստանում
Հեռու՛-հեռու՛ տափաստանում[10]*:*

---

[9] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 24:*
[10] *Նույն տեղում:*

Այստեղ ակնհայտ են հայրենիքի ճակատագրով մտահոգ բանաստեղծի տագնապները. Հայաստանի ջրերը հայրենի լեռների մեջ չունեն ապաստան եւ գնում են ապաստան գտնելու հեռու տափաստաններում: Պարզ է եւ ենթատեքստը:

Ձյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հորդում ջրերդ:
Հավքերդ երգում են հայերեն,
Խոփերդ հերկում են հայերեն,
Հայերեն են տոկում ջրերդ:

Համադրությունը դառնում է ազգային ու անհատական մտածողության գործառնություն: Այստեղ ևս ազգային եւ համամարդկային գաղափարախոսության հիմքի վրա ձեւավորված աշխարհայացքը բնությունը դարձնում է բարոյական նորմերի աղբյուր: Ոգեկիր ու շնչավոր խորհրդանիշ են դառնում ձյունը, ջուրը, հավքը, մասրենին, քարափը: Սահյանն, իրավամբ, Հայաստան աշխարհի օրհներգուն է:

Սահյանի պոեզիայում ժամանակը ներկայանում է պատմական ժամանակի բնութագրումով: Հատկանշական են նրա բանաստեղծական ժողովածուների ու բանաստեղծությունների վերնագրերը, որոնք մի ամբողջ պատմական ժամանակաշրջան ու պատմական կենսագրություն են խորհրդանշում՝ «Հայաստանը երգերի մեջ», «Նաիրյան դալար բարդի», «Որոտանի եզերքին», «Երգ Հայաստանի», «Հայ ժողովրդին», «Արաքս» եւ այլն:

«Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունը մարմնավորում է Հայաստան երկրի պատմությունը՝ անցյալ, ներկա եւ ապագա ժամանակներում՝ այսինքն՝ Հայաստանը հինավուրց, նորօրյա եւ դեռ չգրված երգերի մեջ. հինավուրց

երկիր, տարագիր հայի հոգու բաղձանք, պանդխտության ճամփաներ, որբերի սիրտ, որդեկորույս մայրեր, անտունի, հորովել քաղցրահնչուն, խրախճանքներ, այսպիսին է Հայաստանը հինավուրց երգերում: Մի քանի տողի մեջ Սահյանը ներկայացնում է հազարամյա պատմություն ունեցող ժողովրդի կենսագրությունը եւ երգերի մեջ արտացոլում ժամանակը՝ ժողովրդի կենսածեւով ու կենսատարածությամբ, բնավորությամբ ու հոգեկերտվածքով.

Մի Վարդանի սրի շառաչ,
Մի Ֆրիկի արդար բողոք,
Մի Սասնա տան թուր-կայծակի
Դավթի հզոր ձեռքերի մեջ.-
Այսպիսին է Հայաստանը
Մեր հինավուրց երգերի մեջ:

Ապա բանաստեղծը գծում է նորօրյա Հայաստանի փառավոր ու հաղթանակած, հույս առաքող պատկերը. ժամանակն այստեղ ամենավեհն է փառքերի մեջ.

Արարատյան երկնքի տակ
Իր ոստանը սրբագործել,
Ամեն մի քարն իր երազի
Արեւով է ոսկեզօծել,
Ի հեճուկս նրանց, ովքեր
Մեր Արարատն առան գերի,
Իր հանճարի բռնկումով
Կերտել է Տունն իր երգերի,
Կերտել է նոր մի Արարատ
Երկինք մտած շենքերի մեջ.-
Այսպիսին է Հայաստանը
Մեր նորօրյա երգերի մեջ:

Հայաստանը հավերժ է, ժամանակն ու մահը անզոր են կենսահաստատ ժողովրդի առջեւ, ուստի.

Շաղ է տալիս բերքն իր բարի
Անմահության հերկերի մեջ
Իմ բարձրաբերձ Հայաստանը
Դեռ չգրված երգերի մեջ[11]*:*

Պատմական ժամանակը Սահյանի ինչպես այս, այնպես էլ շատ ու շատ ստեղծագործություններում կենտրոնական թեմաներից է: Պատմական ժամանակը ստատիկ վիճակ չի ճանաչում, այն ապրում է բնության հետ համահունչ՝ ծնունդ, կյանք, մահ, անմահություն: Բնությունը Սահյանի պոեզիայում դառնում է պատմության արտահայտություն: Բնությունը պատմություններ չգիտի, բայց բնության մեջ ապրում են ներկայի, անցյալի եւ գալիքի բոլոր ոճերը[12]: Եվ լավատեսությունը երբեք չի լքում Սահյանին:

Սահյանի աշխարհում բնությունն անմահ է, ասել է թե՝ ժամանակն անվերջանալի է, պատմությունը հավերժ է ու հարաշարժ: Մարդկային կյանքի պատմությունը մայրամուտ չունի, այսինքն՝ բանաստեղծը միշտ ներկա է իր աշխարհում, որովհետեւ նա բնության մի տարրն է: Քարի վրա մամուռն է բուսնում ու քարի վրա դիմավորում արեւածագն ու մայրամուտը եւ այսպես անվերջ՝ նորից ու կրկին… Բնության հարաշարժության մեջ են պատմությունն ու ժամանակն արտացոլվում, նույնականանում ու մշտահոլով կրկնությամբ նորովի ծնվում՝ չհավատալով մայրամուտին, ժամանակի վախճանին.

---

[11] *Սահյան Հ., Հայաստանը երգերի մեջ, Երեւան, «Հայպետհրատ», 1962, էջ 83:*
[12] *Պաս Օ., Մենության լաբիրինթոսում: Բանաստեղծություններ, էսսեներ, Երեւան, «Գրական էտալոն» հրատարակչություն, 2012, էջ 80:*

Մի փոշոտված փշատենի,
Մի հոշոտված խաղողի որթ,
Նորքի վրա մի հին բարդի,
Մի հին բոստան Արազի մոտ,
Մի տարագիր հոգու բաղձանք,
Մի ծիծեռնակ ու մի կռո՞ւնկ,
Պանդխտության ճամփաներում
Հազար քարի բախված կրո՞ւնկ…[13]

Այս բանաստեղծության մեջ բնությունն արտացոլում է հայ ժողովրդի պատմությունը, բանաստեղծը պատմական ժամանակի դրսեւորման միջոց է ընտրել բնությունը եւ «փոշոտված փշատենին» ու «հոշոտված խաղողի որթը» հիշեցնում են հայոց պատմության արյունոտ էջերը, հին բարդին այստեղ հինավուրց ազգի խորհրդանիշն է, իսկ ծիծեռնակն ու կռունկը՝ պանդխտությունն են խորհրդանշում, որով դարձյալ պատմական ժամանակն է բնութագրում: Այսպիսով՝ Սահյանը բնությունը դիտարկում է նաեւ որպես պատմական ժամանակը բնութագրող, եւ իր բանաձեւումներով հանգում է անմահության գաղափարին, հավերժ են Հայաստանն ու հայը, հայի ժամանակը բնության պես հարահոս է, քանի որ

Արեւ է տանում աշխարհներին,
Արեւին թիկնած, արեւից շիկնած,
Արեւի երկիր Հայաստանս[14]*:*

Համո Սահյանի բնապաշտական երկերում բավականին շատ են **ժամանակի՝ որպես փիլիսոփայական կատեգորիա**

---

[13] *Սահյան Հ., Հայաստանը երգերի մեջ, Երեւան, «Հայպետհրատ», 1962, էջ 83:*
[14] *Նույն տեղում, էջ 87:*

արտահայտող ստեղծագործությունները: Բնորոշ է «Սեզամ, բացվի՛ր» ժողովածուից «Տար ինձ, ժամանակ» ստեղծագործությունը: Ժամանակը համակարգային-սիմվոլիկ նկարագիր է ստանում Սահյանի մի շարք ստեղծագործություններում:

Այս քարանձավներն անկոպ ու անբիբ
Աչքերն են անգիր հավիտենության:
Այս պարզ ու պղտոր գետերն աշխարհի
Ասքերն են անգիր հավիտենության:
Կիրճեր կուլ տված կիրճերն այս մթին
Պատկերն են անգիր հավիտենության:[15]

Ժամանակը որպես հավերժության գաղափար է հանդես գալիս Սահյանի նաև այս ստեղծագործության մեջ: Ժամանակի խորհուրդն արտահայտող գրեթե բոլոր ստեղծագործություններում էլ արտացոլված է անտիկ փիլիսոփաների յուրատիպ մեկնաբանմամբ՝ ժամանակի «հավերժական վերադարձը»:

Բ. Ժամանակի տագնապները: Սյունյաց աշխարհի բնության անկրկնելի գեղեցկություններին զուգադրելով հասարակական-սոցիալական կյանքի երեւույթները՝ Սահյանն ընդգծված ձեւով ներկայացնում է իրականության ողբերգական, ստվերոտ կողմերը: Եվ այս առումով նա արձագանքում է մեր քնարերգության մեծ ողբերգակներին: Մի հանգամանք, որին առայսօր մեր գրականագիտության մեջ պատշաճ ուշադրություն չի դարձվել: Եթե նախորդների մոտ ողբերգության ակունքներն ազգի եղեռնական ցավի մեջ են՝ «Երանի նրան, ով հայրենական տուն ունի հիմա» (Տերյան), «Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ,//

---

[15] *Սահյան Հ., Սեզամ, բացվիր, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1972, էջ 5:*

Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ» (Չարենց), ապա Սահյանի պարագայում ողբերգության հիմքերը պիտի փնտրել խորհրդային «խաղաղ» օրերի մղձավանջի մեջ: Եվ Սահյանի մոտ բնության գեղեցկություններին հակադրվում են սոցիալական անարդարությունները, չարիքը: Ուշադրություն դարձնենք հայրենական տան սահյանական պատկերներին.

Չտեսնեի, մեր երդի ծուխ,
Քեզ կտրված չտեսնեի:
Ախ, մեր սյունի ծունկը ծալված,
Վիզը ծռված չտեսնեի:[16]

Այս բանաստեղծությունը մի ամբողջական ողբ է՝ խորհրդային տարիներին դատարկվող, ավերակվող հայրենիքի ու հայրենի տան մասին:

Առհասարակ, քարը, տունը, հողը, քարափը հասկացությունները Սահյանի գեղագիտության մեջ անընդհատ գործողության մեջ դրվող եզրույթներ են, յուրաքանչյուր անգամ բանաստեղծության մեջ դրանք ներկայանում են նոր գույներով.

Մեր տան պատից մի քար լիներ,
Նստեի վրան
Ու պատմեի անտուն կյանքիս
Հեքիաթը նրան[17]*:*

Պատկերը բանաստեղծի լեզվի մեջ արտաքին նկարագրականից «տեղափոխվում է» ներքին տրամաբանու-

---

[16] *Սահյան Հ., Տոհմի կանչը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981, էջ 118:*
[17] *Նույն տեղում, էջ 33:*

թյան դաշտ՝ ներկայացնելով երեւույթի էական կողմերը: Եվ ահա այստեղ է, որ իր «տան մեջ անտուն» մնացած բանաստեղծի կյանքի «հեքիաթը» ներկայանում է ինքնաձաղկման խորը ապրումների ու խռովքի մեջ, ուր նկատելիորեն ընդգծվում է հեղինակի կողմից նրբորեն, գրեթե չերեւացող հեգնանքը՝ որպես պատկերավորության միջոց: Սահյանը ժողովրդական ողբասացների ոճն ու մտածողությունը նորովի է կիրառում իր պոեզիայում՝ նրանց մեջ պահպանելով ազգային ոգին եւ իմաստնությունը.

Պտուղդ քաղող չկա,
Մասրենի, սարի մասրենի,
Պատիվդ պահող չկա,
Մասրենի, բարի մասրենի[18]*:*

Ժողովրդական ողբասացների մտածողությանը հատուկ կրկնությունները («Մասրենի, սարի մասրենի») գեղարվեստական խոսքը դարձնում են ավելի ազդեցիկ ու հուզական, ամբողջության մեջ՝ եղերական ու համոզիչ: Ոճական այս հնարանքը հոգեւոր աղերսներ ունի Թումանյանի «Մարո» պոեմում նկարագրվող տեսարանի հետ, երբ Մարոյի մայրը ողբում է «Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան, Ո՞վ անիծեց, Մարո ջան»:

Եվ, որ ամենակարեւորն է, ժողովրդական բանահյուսության հենքի վրա կառուցելով իր գեղարվեստական խոսքը՝ Համո Սահյանը կարողանում է մաքուր, հյութեղ ու «արքայական լեզվի» միջոցով ներկայացնել ազգային բնավորություն ու նկարագիր:

---

[18] *Սահյան Հ., Տոհմի կանչը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981, էջ 147:*

Աշխարհի անցուդարձը նոր ողբերգությունների մորմոք է ծնում բանաստեղծի խոհերում:

Խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությունն ու Հայրենական մեծ պատերազմի պատճառած ավերածությունները նոր ողբեր են ծնում բանաստեղծի աշխարհում՝ ավելացնելով ազգի ցավն ու մորմոքը.

Եվ յոթ անգամ յոթ տարի է անցել,
Եվ յոթ աշխարհ է մաշվել աշխարհում,
Եվ յոթ աշխարհ է թեւերը բացել,
Եվ յոթ բանակ է մոռացվել սարում...[19]

Եվ ցավալի է, որ տառապանքի մեջ հավատն ու հոգին՝ որպես միասնական տաճար, ավերվում են.

Լռած զանգ է կյանքս...
Ես, ավերակ վանքս,
էլ աղոթող չունեմ[20]*:*

Այս տրամադրությունները նոր որակ ձեռք բերեցին Սահյանի՝ անկախության տարիների ստեղծագործություններում: Բանաստեղծն իր սրտի վրա զգաց ժամանակի ծանրությունը: Մութ ու ցուրտ օրեր ապրեց մի ամբողջ ժողովուրդ, եւ, բնականաբար, ժողովրդի հետ նրա ցավը կիսեց բանաստեղծը: Դժբախտաբար, Սահյանի կյանքի վերջին տարիները դժվարին էին ոչ միայն բանաստեղծ-քաղաքացու, այլեւ մեր ամբողջ ժողովրդի համար: Եվ ծնունդ է առնում Սահյանի նոր բանաստեղծությունը, որն, ասես, հայելու մեջ արտացոլում է ժամանակի պատկերը.

---

[19] *Նույն տեղում, էջ 90:*
[20] *Նույն տեղում, էջ 12:*

Գնանք օտարի դռները բախենք,
Թերմացքներ մուրանք, որ սովը թաղե՞նք…
Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի
Այս անկախության պարանով կախենք
Ու ճոճվենք՝ մինչեւ վերեւից նայի,
Տեսնի, սարսռա, սարսափի Աստված
Եվ, իր ստեղծած աշխարհի նման,
Մեզ վերջին անգամ մի բան խոստանա
Ու խաբի Աստված…[21]

Այս հուսահատ տրամադրությունների եւ ժամանակի իշխանությունների հանդեպ ունեցած դժգոհությունից են ծնունդ առել նաեւ բանաստեղծի «Աղոթեմ» բանաստեղծության տողերը.

Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի…
Սրա՞նք են այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մահս շտապի…[22]

Սահյանը, թերեւս իր սերնդակիցների մեջ միակն էր, որ եզակի նյարդով զգաց դաժան իրականության մտահոգությունները եւ չարենցյան բնորոշմամբ դարձավ «իր ժամանակի շունչը»: Բանաստեղծի «նաիրյան մորմոքները» առավել մեծ շեշտադրում ստացան հատկապես Արցախյան շարժման ու ազատամարտի տարիներին:

Որտեղի՞ց այսքան ցավ ու թախիծ,-
Քարեր են փշրվում սրտիս վրա…

---

[21] *Սահյան Հ., Ինձ բացակա չդնեք, «Զանգակ-97» հրատարակչություն, Երեւան, 2014, էջ 235:*
[22] *Նույն տեղում, էջ 216:*

Գույժեր են գալիս Ղարաբաղից,
Սարեր են փշրվում սրտիս վրա,
Կռվում են այնտեղ քաջերն ազգի…
Եվ, ահա, նախերգը նրանց ասքի
Ողբի է փոխվում եւ մահազդի,
Դարեր են փլվում սրտիս վրա[23]*:*

Սահյանը, բնականաբար, մեծ վիշտ էր ապրում Արցախյան պատերազմում մեր ժողովրդի ունեցած մարդկային կորուստների համար, եւ ահա 1992 թվականի դեկտեմբերին նա գրում է.«Մտքիցս չեն գնում Ղարաբաղում ընկած մեր էդ տղաները: Ես լաց եմ լինում. ի՜նչ մերեր են բերել, ինչ ոգի են, ազգի ոգի ասածդ իրենք են: Ազգի փրկության համար մարտադաշտ իջածը այլևս վեր է ամեն մի կուսակցության անդամ լինելուց, վեր է ամեն մի բանից: Բոլորը միասին ազգի զավակներ են, ազատամարտիկներ, փրկիչներ, հրաշալիներ:

Ամենասարսափելի բանը, ամենացավալի բանը, որ էս ընթացքում մեզ հետ կատարվեց, էդ տղաների կորուստն է: Ազգի ընտրանին, ամենալավ տղերքը գնացին: Գենը գնաց, տեսակը գնաց: Ոնց որ հատուկ ընտրես տանես: Բայց թե՝ իրենք իրենց են ընտրում: Պատրաստված, խելոք, կարդացած տղաներ: Մեռան գնացին: Անուններն էլ չկան: Վա՜յ, վա՜յ, ո՞նց պիտի վերականգնենք: Այս տղաները գերազանցում են մեր ֆիդայիներին, նախորդ մեր բոլոր նվիրյալներին: էդպես էլ պիտի լիներ, այլապես ազգը չէր գոյատևի:

---

[23] *Սահյան Հ., Ինձ բացակա չդնեք, «Զանգակ-97» հրատարակչություն, Երեւան, 2014, էջ 227:*

էդ տղերքը պիտի ազգն առաջնորդեին, երկիրը ղեկավարեին…Սրանք մեծերի մեջ են….»[24]:

Եվ որքան էլ տրամադրությունները հոռետեսական լինեն, այնուամենայնիվ, անգամ ամենահուսահատ պահին, գրողին չեն լքում ժողովրդական լավատեսությունն ու հավատը: Խոսելով մեր զոհված քաջերի մասին՝ հառաչում է նա՝ «Ինչ մերեր են բերել…»: Պարզ է, որ նման հերոսներ ծնող ժողովրդի հավերժությունը կասկած չի կարող հարուցել, եւ գրողի տխրությունն անգամ դառնում է մի նոր խիզախման, ելքի դուռ:

[24] *http://life.panorama.am/hy/news/2013/12/03/hamo-sahyan/48967*

Թեմա 3

Մարդու ներաշխարհի բացահայտումը բնության միջոցով

3.1. Մարդու և բնության հարաբերությունը

3.2. Բնությունը՝ մարդուն ազնվացնող երևույթ

Ա. Մարդու և բնության հարաբերությունը: Բանաստեղծի իդեալը մարդու եւ բնության փոխներթափանցման մեջ է կայանում: Նա իդեալականացնում է բնության նախաստեղծ մաքրությունը: Մարդն ու բնությունը շաղկապված են իրար եւ միմյանց զորացնում են Սահյանի ստեղծած աշխարհում: Սահյանական բանաստեղծական մտածիրում արժեքային կողմնորոշման յուրահատուկ դրսևորում կարելի է դիտել բնապաշտությունը և էկոհումանիզմը: Ըստ էության, բնապաշտությունը ազգային արժեհամակարգի չափորոշիչային ցուցիչ է, որն ունի գաղափարախոսական ակնառու շեշտադրումներ: Այստեղ, իհարկե, առանձնացվում են գրական երկու եզրույթներ՝ մարդու և բնության: Ըստ որում՝ երկուսի պարագայում էլ զուգահեռների օրինաչափության ընդհանրություն կա, որովհետև մարդու և բնության հարաբերությունները դիտվում են ներդաշնակության ու փոխազդեցության ամբողջականության մեջ:

Բնությունը դավանանք է Սահյանի պոեզիայում և ընկալվում է որպես գոյաբանություն համարվող, որպես ինքնին (սուբյեկտից անկախ) և նույնիսկ առավելապես մտահայեցողական «բնափիլիսոփայություն»: Փիլիսոփայության լեզվով ասած, դա սուբյեկտի հետ առնչված և սուբյեկտի

համար արժեքավորվող աշխարհ է՝ անկախ այդ աշխարհի մասին գոյություն ունեցող փիլիսոփայական, թե մասնավոր-գիտական պատկերացումների, մի բան ակնհայտ է, որ հենց այդ աշխարհն է ծնել ու սնել մարդուն:

«Հասարակությունը և մարդը ունեն կեցության որոշակի բնական հիմք, բայց իրենց առանձնահատկության մեջ նրանք բնության մաս չեն կազմում: Հաճախ օգտագործվող «երկրորդ բնություն» արտահայտությունը, այսինքն՝ «մարդ-կայնացած բնությունը» կարող է շփոթմունք առաջացնել: Մարդը ինչպես էլ փոփոխի բնությունը, այն վերջին հաշվով մնում է էլի նույն բնությունը: Մարդը չի կարող երկրորդ բնություն ստեղծել, բայց նա բնությանը տալիս է սիմվոլիկ նշանակություն: Երկրորդ բնությունը ոչ այլ ինչ է, քան բնությունը իր սիմվոլիկ նշանակությամբ»[25]:

Բնությունն այնքան կենդանի և ճշգրիտ է արտացոլվում սահյանական պոեզիայում, որ այն դառնում է պաշտամունք ու հանդես գալիս «առաջին» և «երկրորդ» բնության հասկացությամբ: Սահյանի բնապաշտական երկերի փիլիսոփայությունը դառնում է իր քարտեզագրած հայրենի եզերքի, նրա բնության ամեն մի փոքր պատկերի յուրատեսակ դավանանքը, նրա գեղարվեստական մտքի ոգեղեն հիմքը, որն ընթերցողին բացահայտում է հեղինակի հոգեաշխարհը, իր կերտած բնության արտապատկերի անդրադարձով: Քարափը, մասրենին, դալար բարդին, առուն, ծառի ստվերն ու մայրամուտը, հավքն ու լույսը, հողն ու հասկը, կածանն ու ջրաղացը դառնում են Սահյանի պոետական մտածողության խորհրդանշային համակարգը և նրա պատկերաիմաստային ու հուզազգացմունքային ընկալումների բովանդակային ամ-

---

[25] *Կանկե Վ., Պատմական և սիստեմատիկ դասընթաց, Երեւան, 2001, էջ 218:*

բողջականությամբ, պոետական ինտուիցիայի գեղարվեստական ներկայությամբ ու ներշնչմամբ պատճառավորվում է բնապաշտական երկերի փիլիսոփայական գերխնդիրը. այն է՝ բնության ու մարդու, նրանց փոխադարձ հարաբերությունների ներդաշնակությունը:

Բ. Բնությունը՝ մարդուն ազնվացնող երևույթ: Սահյանի բնապաշտական երկերը կարելի է դիտել որպես յուրատիպ փիլիսոփայություն ու արժեքաբանական համակարգ: Այս համակարգն իրականում հղկում է մարդու հոգին ու միտքը: Եվ այստեղ է, որ բնապաշտական պոեզիան դառնում է անսակարկելի, բնությունը դիտվում որպես մարդուն ազնվացնող, կատարսիսի հասցնող երևույթ, հետևապես, հաստատուն՝ պոետի գրական-գեղարվեստական համապատկերում:

Փիլիսոփայական աշխարհայացքը սովորաբար հստակեցնում է այն, թե ինչ է պատկանում գիտակցությամբ ու կամքով օժտված բանական մարդուն, ինչը՝ բնությանը[26]: Եվ եթե փիլիսոփայությունը շեշտադրում է մարդու և անսահման տիեզերքի միջև հակադրությունը, ապա, սահյանական ընկալմամբ, դա մեկ ներդաշնակ ամբողջություն է, մերձեցված վիճակ: Թալեսյան մոտեցմամբ (հիլոզոիզմ) շնչավորվում են «Լուսնյակի խրտնած շողքը, որ ուշաթափվում է թոնրի շուրթին», «կիսարթուն քամին թռչում է կտուրից», «կտուրին բարդու ստվերն է քնում» և այլն:

Հողոտ, մղեղոտ մութ էր հագնում,
Հետո լուսնյակն էր հագնում մեր տունը:
Կտուրին բարդու ստվերն էր քնում,
Եվ շեմքի վրա քնում էր շունը:

---

[26] *Հակոբյան Ս., Փիլիսոփայության տեսություն և պատմություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երեւան, 2009, էջ 12:*

Կիսարթուն քամին կտուրից թռչում,
Ցանկապատին էր հենում կռնակը:
Անթեղի վրա կատուն էր ննջում,
Իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը[27]:

Սա զգայվող բնությունից վերացարկված կեցության դրսևորում է և ինչպես Արիստոտելը կասեր՝ ամենամտահայեցողականը, որի կատեգորիաներից են էությունը, հարաբերությունը, տեղը, ժամանակը, տիրապետումը, գործողությունը, կրումը[28]:

Ձորից եկավ ինչ-որ ճիչ,-
Պախրան ծնում է:
Մութը մաշվում է քիչ-քիչ,
Աստղը քնում է:
Սարը լույսի լուրն առել,
Կանգնել-մնում է:
Անտառն արդեն քունն առել,
Բայց դեռ լռում է[29]:

Այստեղ սոսկ հեղինակի ապրումների փորձը չէ, որ դրսևորվում է: Այստեղ առկա է տիեզերքի հետ մերձեցման բարձրագույն ապրումներից ծնված խոհը կամ, նույն արիստոտելյան մտահայեցողությունը:

Փիլիսոփայական մի շարք բարոյագիտական ուսմունքների հիմքում, մասնավորապես ստոիկների մոտ, ընկած է բնության հետ համաձայնության մեջ գտնվելու սկզբունքը:

---

[27] *Սահյան Հ., «Տոհմի կանչը», «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981, էջ 5:*
[28] *Նույն տեղում, էջ 52:*
[29] *Սահյան Հ., «Տոհմի կանչը», «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981, էջ 54:*

Ավելին, երջանկությունը ինքը դիտվում է որպես բնության հետ համաձայնության մեջ ապրելու բարձրագույն բարիք:

Սահյանի բնապաշտական երկերի փիլիսոփայությունը ևս ամուր արժեքային հիմքեր ունի, և, ըստ էության, այն կարելի է դիտել որպես ամբողջի արժեհամակարգային մաս: Ինքը՝ հեղինակը, և բնությունը խորը նույնացման մեջ են: Թերևս նաև սրանով է պայմանավորվում այն մեծ բարությունը, որ հանճարեղ ձևով արտացոլված է բնության շունչն առած ամեն մի չափածո գործում:

Ու ես եկա... Ասում են, թե
Թոնրի շուրթին ուշաթափվեց
Խրտնած շողը լուսնյակի,
Լուսաբացի մի պատառիկ
Երդիկն ի վար թրթռալով՝
Ընկավ մորս հոգնած բարձի
Եվ իմ անհոգ բախտի վրա:
Երկինքն ի վեր թրթռալով՝
Իմ առաջին ճիչը թռավ
Եվ առաջին ծիծեռնակի
Ծիվ-ծիվի հետ
Քիվից կախվեց բակի վրա[30]*:*

Այստեղ սոսկ բնության կողմից տրված պատկերները չեն, որ խոսում են: Այս և մի շարք այլ բանաստեղծություններում բնությունը կերպավորվում ու սիմվոլացվում է բանաստեղծի խոհականության արդյունքում: Զգայական ու մտահասանելի աշխարհների միջև չկա և ոչ մի անջրպետ: Ավելին,

---

[30] *Սահյան Հ., «Սեզամ, բացվիր», «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1972, էջ 19:*

բնությունը դառնում է ինքնահաղթահարման, սեփական ներքին խնդիրները հաղթահարելու միջոց:

Սայեանի բնապաշտական երկերի փիլիսոփայության մեջ մենք տեսնում ենք կյանքի նպատակի և արժեքների նույնացման հարցը: «Մենք իրար ճանաչում էինք» բանաստեղծության մեջ ևս ակնհայտ է **բնության և մարդու նույնացման իրողությունը**, որի վերջնական իմաստը բնության պաշտամունքն է, նրա հետ ձուլվելու ներքին մղումը:

Մենք իրար ճանաչում էինք,
Իրար հետ կանաչում էինք,
Մեր բակի ծաղիկը ու ես:
Մենք իրար ճանաչում էինք,
Իրար հետ կարկաչում էինք,
Մեր գետի ալիքը ու ես[31]*:*

Ինչպես տեսնում ենք, բնությունը դառնում է մարդու մարդկայնացման ու ճիշտ սոցիալականացման հիմք: Բնության հետ նույնացման մեջ մտնելու փիլիսոփայությունը դառնում է ոչ միայն սայեանական բնապաշտության փիլիսոփայության բնորոշ կողմ, այլև հոգևոր մշակույթի ինքնատիպ տեսակ՝ մարդ-բնություն հարաբերությունների իմացական-արժեքային համատեքստում: Եթե փիլիսոփայությունը հաճախ դիտվում է որպես յուրատեսակ կամուրջ և միջնորդ է մարդու և բնության միջև[32], ապա սայեանական պոեզիայում այն դառնում է մերձեցված, նույնականացված վիճակ, բնության հետ մեկ ամբողջական միավոր:

---

[31] *Սայեան Հ., «Տոհմի կանչը», «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981, էջ 120:*

[32] *Հակոբյան Ս., Փիլիսոփայության տեսություն և պատմություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երեւան, 2009, էջ 8:*

Ապառաժներ համր ու հանդարտ,
Հողակիցներ իմ թանկագին,
Ջորավարներ անսաղավարտ,
Թագավորներ անթագակիր,
Եկել եմ, որ լսեմ դարձյալ
Խորհուրդը ձեր փակ բերանի,
Լռությունը ձեր քառաձայն,
Համրությունը ձեր լեզվանի:
Կանգնեք այդպես իմ շուրջբոլոր,
Հրամայեք, որ քարանամ
Եվ ձեզ նման բոլոր, բոլոր
Սերունդներին ընկերանամ[33]*:*

Հիրավի, Սահյանի պոեզիան ներկայանում է աշխարհն ազնվացնելու մղումով, եւ ճակատագրով թիապարտ գրողի տողը տրոփում է ժամանակի ընթացքին համահունչ՝ մե՛րթ տագնապահար, մե՛րթ մտախոհ, բայց միշտ լուսավոր ու ազնվացնող:

Բանաստեղծության սահյանական տեսակը գալիս է հաստատելու, որ ճշմարիտ պոեզիան հնչում է մարդու սրտի տրոփյունին ու մտահայեցությանը ներդաշնակ:

---

[33] *Սահյան Հ., Սեզամ, բացվիր,«Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1972, էջ 66:*

Թեմա 4
Բառի գեղագիտությունը

4.1. Գույնը, բույրը, ձայնը՝ Հ. Սահյանի բնապաշտական երկերում որպես գեղագիտական միավորներ

4.2. Բառ-խորհրդանիշներ

Ա. Բառի գեղագիտությունը. գույնը, բույրը, ձայնը՝ Հ. Սահյանի բնապաշտական երկերում որպես գեղագիտական միավորներ: Խոսելով Սահյանի բերած նորարարությունների մասին՝ պետք է ընդգծել Սահյանի բառի գեղագիտության գործառույթը: Սահյանի բառը բարձրացնում է մարդուն դեպի երկնայինը, մղում ազնվության եւ ստիպում նրան ապրել խղճի ու բարոյականության օրենքներով:

Բանաստեղծի պոետական աշխարհում բառը մի ամբողջ կենսագրություն է իր մեջ ամփոփում, ճակատագիր, հուզազգացական աշխարհ: Սահյանի բառի գեղագիտական համակարգը կազմված է նրա իմաստաբանական գործառույթների առանձնահատկություններից:

Նրա բառը ներկայանում է միայն իրեն հատուկ ենթիմաստային բազմաշերտությամբ, որը պայմանավորված է գրողի աշխարհայեցողությամբ, գեղագիտական ըմբռնումներով, մարդու ներաշխարհը թափանցելու ունակությամբ, բնության միջոցով մարդու հույզերը թարգմանելու տաղանդով, իր բառով իր հայրենիքի սահմանները քարտեզագրելու եւ պատմությունը գեղանկարչորեն ու փիլիսոփայորեն վերարտադրելու հանճարեղությամբ: «Բառի կենսագրություն» ասվածը Սահյանի պարագայում, թերեւս, կարելի է ասել,

հայի կենսագրություն է, բնաշխարհի պատմություն, մարդկային ներաշխարհը բնության կատարելության հասցնելու ձգտում: «Պոեզիան թարգմանել ես անգլերեն,- գրում է Սահյանը,- պիտի անգլիացին իմանա՝ այդ երկրում ինչ ծառ է աճում: Անգլիացին պիտի կարդա եւ ասի՝ սա Հայաստանն է, որտեղ ապրում է ժամանակակից հայ մարդը»[34]:

Սահյանի բառն ունի հոգեբանական պատկեր, որն անընդհատ բանաստեղծությունից բանաստեղծություն, շարքից շարք շարժման մեջ է եւ գունավորվում, սեմանտիկորեն ընդլայնում է իր սահմանները, ժամանակային ծավալումները: Առանց չափազանցության կարելի է ասել, որ Սահյանը բառի ընտրության հարցում անգերազանցելի վարպետ է:

Հ. Սահյանի պոեզիայում գույնը, բույրը, ձայնը հանդես են գալիս որպես գեղագիտական միավորներ: Յուրաքանչյուր գույն, երանգ մի տրամադրություն է ավելացնում սահյանական բնաշխարհի պատկերային ներկապնակին: Այսպես՝ «Կապույտ երգ» բանաստեղծության մեջ իշխում է կապույտ երանգը, որը խորհրդանշում է բանաստեղծի վերհուշերի աշխարհը եւ ընթերցողին ուղեկցում է կապույտը.

Իմ վերհուշերի կապույտ աշխարհում
Լեռները նորից երկինք են հագել,
Երկինքոտվել են ոտքերս նորից:
Կանգնել եմ կապույտ ամայության մեջ
Ես մեն ու մենակ…Եվ կապու՜յտ-կապո՜յտ…[35]

Կապույտ սուլոց, որ խորհրդանշում է բաժանումը, կապույտ սարսուռ, կապույտ գլխապտույտ եւ այլն: Հե-

---

[34] *Հովնաթան Հ., Խոսում, խոսեցնում է Համո Սահյանը, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 2014, էջ 55:*
[35] *Սահյան Հ., Երկեր, հ.2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 21:*

տաքրքիր է թերևս այն, որ նրա արտացոլած գույներն իրենց զուգորդություններով ոչ միայն գունային, այլև լսողական ու հավասարակշռման, հոտառության ու շոշափելիքի զգայություններ են բնորոշում:

Բանաստեղծի ապրումներն այնքան խորն ու պատկերավոր են արտացոլված, որ ընկալելի է նաև նրա գունային զգայությունների ինտենսիվությունը: «Կապույտ ամայություն», «կապույտ սուլոց», «կապույտ սարսուռ», «կապույտ գլխապտույտ». սրանք խոսքային, նկարագրական արտահայտություն ստացած լսողական ու գունային զուգորդումների համադրություններ են, որոնք բնության հետ մարդու մերձեցումը դարձնում են առավել իրատեսական ու շոշափելի: Կարմիր գույնի մեջ բանաստեղծը մարմնավորում է աշնան տխուր հուշն ու օրվա անդարձության փիլիսոփայությունը.

Ժայռից մասուր է կաթում,
Կարմիր սարսուռ է կաթում.
Ձորում մշուշ է:
Առուն մասուր է տանում,
Կարմիր սարսուռ է տանում.
Ի՜նչ էլ աշխույժ է[36]*:*

Բանաստեղծը ուշ աշնան պատկերը վրձնելու համար պատահականորեն չի դիմում կարմիր գույնին ու կաթող մասուրին: Զգայությունների ընդհանուր օրինաչափությամբ կարմիր գույնը հանդես է գալիս բովանդակային ինտենսիվությամբ. «կարմիր սարսուռ է կաթում», «կարմիր սարսուռ է տանում»: Այսպես, մենք առնչվում ենք գեղանկարչական բարձր որակի հասցված գունային մշակումների, որ-

---

[36] *Սահյան Հ., Երկեր, հ. 2,«Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 67:*

տեղ գույնը դառնում է ներքին որակ… Օրինաչափ և հետադարձ ազդեցության կապ գոյություն ունի նրա ապրումների և տրամադրությունների ու կիրառվող գույների ընտրության միջև, այլապես «մասուրից կարմիր սարսուռ չէր կաթի»:

Ինչպես տեսնում ենք, գույնը դառնում է ասելիքի գեղագիտական լեզվի շքեղության մենաշնորհ, ներքին իմաստի արտահայտություն: Եվ գույների համադրությամբ ու ընտրությամբ ամբողջականացվում և իր իսկ՝ սահյանական ձևով են արտահայտվում նրա հուզաշխարհն ու ներքնաշխարհը:

Շիկնող քարափ, կանաչ-կարմիր մայրամուտներ, կանաչ-կարմիր օրեր, սեւ քրտինք, սեւ մշուշ, ծիծաղող կանաչ, կապույտ երազ, ծիածանային խոնավություն, ճերմակ նախշեր քաշող ցուրտ եւ այլն: Գույներն այնքան կենսունակ են, որ գծագրում են կյանքի ճշմարտությունը և լավատեսության հզոր շունչ հաղորդում ընթերցողին:

Հայաստանի մասին խոսելիս բանաստեղծը տողի մեջ միանգամից խտացնում է մի քանի գույներ՝ «Կանաչ-կարմիր, ծիրանի, Ճերմակ ու բիլ Հայաստան»[37] կամ՝ «Մանուշակագույն երկինք են թվում//Դաշտերում ծաղկած արտերն առվույտի»[38]:

Սահյանի խոսքի պատկերավորությանն առանձնահատկություն է հաղորդում նաեւ բույրը, որն ավելանում է գույնին՝ պատկերը դարձնելով ավելի զգայական ու կենսաթրթիռ: Այսպես.

Հնձած խոտի բույր է բերում
Սարից փախած քամին[39]*:*

---

[37] *Նույն տեղում, էջ 136:*
[38] *Նույն տեղում, էջ 355:*
[39] *Սահյան Հ., Երկեր, հ.2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 16:*

Հնձած խոտի բույրը բանաստեղծին մանկության աշխարհն է հիշեցնում: Թեկուզ մանկության աշխարհն արդեն «յոթ պատան է մաշել», բայց բանաստեղծը մտքի մեջ ու երգի մեջ ուր էլ գնում է, դարձյալ մանկության աշխարհից «մի բեռ կանաչ մանկություն է մնում»: Սահյանի պոեզիայում գույնը բուրում է, բույրը՝ գունավորվում...

«Սարահովիտ» բանաստեղծության մեջ եւս բույրը խորհրդանիշի դեր ունի.

Իմ հեռավոր-հեռու սարահովիտ,
Երգս բույրն ունենար սեւահողիդ[40]*:*

Պատկերաստեղծման, տրամադրությունների արտահայտման համար Սահյանը հաճախ է դիմում բույրին եւ յուրաքանչյուր երեւույթ, առարկա իր բույրով մի շնչող ու բուրող աշխարհ է հիշեցնում.

Երդիկն ի վար երկնքի խաղ,
Առավոտ,
Լույսի հոտ է, մոր ծոցի հոտ,
Հացի հոտ [41]*:*

Ահռելի ձորը, մաշված առուն ու մրսած օդը զուգակցվում են ցավի, անձավի եւ մութի հոտի հետ՝ տրամադրությունը տանելով դեպի ցավը:

Այստեղ բույրն առանձնահատուկ տեղ ունի բնապատկերի ամբողջացման գործում, պոետը բույրի միջոցով արտահայտում է հոգեվիճակ, տրամադրություն՝ «հացը բուրում է՝ հողից // մինչեւ եթերը...,», «Ծաղիկները թռչում են այնտեղ, // Թիթեռները բուրում են...»: Բնության պես պարզ,

---

[40] *Նույն տեղում, էջ 103:*
[41] *Նույն տեղում, էջ 111:*

բայց խորունկ բնապատկերներում ծնողապաշտության գաղափարը, մանկության աշխարհի անաղարտությունը, տոհմի հանդեպ ակնածանքը արտահայտվում են բույրի միջոցով: Այս առումով խիստ բնորոշ է «Ամեն ինչից» բանաստեղծությունը, որտեղ սահյանական եզակի մետաֆորի միջոցով մարմնավորում է ծննդավայրի, օջախի սերը.

Այս ծորերում ամեն ինչից
Օրորոցի հոտ է գալիս,
Պապենական սուրբ օջախի
Ծուխ ու բոցի հոտ է գալիս…[42]

Բույրը Սահյանի գեղագիտական համակարգում դառնում է խորհրդանշական բանալի, որի միջոցով նա բացահայտում է մարդու եւ բնության անքակտելիությունը, ինչը չի վրիպում բնության հետ մանկուց հաշտ ապրող պոետի հայացքից: Սահյանը վարպետորեն համադրում է գույնն ու բույրը, համն ու հոտը, շշուկն ու որոտը: Բույրին ներհյուսվում են համը, շշուկներն ու ձայները:

Սահյանի բանաստեղծությունն ունի առանձնահատուկ մեղեդայնություն: Դեռեւս Նարեկացուց ավանդված բաղաձայնույթի հնարանքը, որը լավագույնս դրսեւորվեց Վ. Տերյանի պոեզիայում, վարպետորեն է կիրառել նաեւ Սահյանը. մեծարենցյան գիշերերգությունը հասնում է Աղոթարան սարը, եւ «Ծիր-Կաթինի փոշոտ, մշուշոտ հարդը շաղ տալով սաղարթներին»՝ Սահյանը «սաղարթներով շոշափում է երկնքի թավշյա փեշերը»: «Գիշեր» բանաստեղծության մեջ «շ» հնչյունի գործածությունը մեղեդայնություն է հաղորդում խոսքին.

---

[42] *Սահյան Հ., Երկեր, հ.2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 135:*

Ինչ ընդարձակ է գիշերն այս գիշեր:
Իմ արմատներով շոշափում եմ ես
Հավիտենության փեշերն այս գիշեր,-
Ինչքան երկար է գիշերն այս գիշեր…[43]

Բ. Բառ-խորհրդանիշներ: Բառի գեղագիտությունը Սահյանի պոեզիայում ձեւաբանվում է բառ-խորհրդանիշներով, որոնք, կարելի է ասել, դառնում են բանալի նրա պոետական աշխարհի գաղտնագրերը բացելու եւ փիլիսոփայական խոհամտածումների հետագիծը հասկանալու համար: Այդ խորհրդանիշ-բառերից են **մասրենի, քար, քարափ, ժայռ, գետ, անցյալ, մանկություն, մենակություն, հավիտենություն և այլն…**

Մասրենի: Սահյանի շատ ու շատ բանաստեղծություններում նկատվում է անձի ու սեփական ազգի հետ ունեցած նույնացման մտածողության գեղարվեստական դրսեւորումը: Ըստ որում այդ նույնացումը տեղի է ունենում ինչպես հայրենի բնության պաշտամունքի լեզվով, այնպես էլ ազգային մտածողության ու հոգեկերտվածքի առանձին դրսեւորումներով: Այս իմաստով որոշ բանաստեղծություններում մասրենին խորհրդանշում է Հայաստանը, բայց մի առիթով էլ նա նշել է՝ «Մասրենին ես եմ»: «Մասրենին իմ երկրի կերպարն է,- գրում է Սահյանը: - Ոչինչ չի ուզում, երաշտ տարին էլ լավ պտուղ է տալիս, մի քանի անգամ ծաղկում… խեղճ, բաշխող, բայց եւ փշեր ունի: …Մասրենին չգիտե եւ չէր էլ կարող իմանալ, որ ինքը հայ է, հայի բնավորություն, որ այդքան բնորոշ է մեր ազգին»[44]:

---

[43] *Նույն տեղում, էջ 256:*
[44] *Հովնաթան Հ., Խոսում, խոսեցնում է Համո Սահյանը, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 2014, էջ 55:*

Նրա հարուստ պատկերային համակարգում մասրենու և հայի համեմատությունն ինքնատիպ ու արտահայտիչ է, որում բյուրեղացված են Սահյանի հոգեկան ամենանուրբ երանգները՝ տեսողական ու զգայական տպավորության բացառիկ համադրությամբ: Այսպիսի համեմատությունը չափազանց անհատական է, կարելի է ասել՝ զուտ սահյանական: «Ոչինչ չի ուզում, երաշտ տարին էլ լավ պտուղ է տալիս, մի քանի անգամ ծաղկում... խեղճ, բաշխող, բայց եւ փշեր ունի». պատկերների ճշգրտությունը համարժեք ու համեմատական է բանաստեղծության գաղափարական նպատակադրմանը: Կարելի է ասել, որ հայ գրականության մեջ մասրենին՝ որպես գեղարվեստական պատկեր, գեղագիտական ուրույն դրսեւորում ունեցավ հենց Սահյանի պոետական աշխարհում:

Մասրենին բարության, մաքրության, խղճի խորհրդանիշն է, փշոտ քնքշանքը փնտրող չկա «երես առած դարում», եւ մասրենին «այրվում է կրքերի կրակում»...

Մարդու էությունը քննելիս բանաստեղծը մշտապես մարդու մեջ որոնում է մարդկայինը, այն է՝ գեղեցիկը, բարին, ճշմարիտը, ազնիվը: Եվ այս ամենն ընդունելով որպես կատարելության չափանիշ՝ պոետը հաճախ է այդ կատարելությունը տեսնում բնության մեջ, վերագրում բնությանը, որի արդյունքում մարդեղենանում են մասրենին, քարը, քարափը եւ այլն:

Մարդու եւ մարդկային էության ներդաշնակության փիլիսոփայական որոնումները մշտապես գտնվում են բանաստեղծի ստեղծագործական խոհերի առանցքում: Բանաստեղծը մասրենու պատկերին է դիմում՝ նմանության զուգահեռներ գծելով իր եւ մասրենու միջեւ («Մասրենի»):

Խփում է ցուրտը ձմռան,
Մտնում ես քո ներսը դու…
Տեսնում ես, թե ես ու դու
Ինչքան ենք իրար նման[45]*:*

Այս բնապատկերում բնությունն ավելի ընկալելի ու միաժամանակ խորհուրդներով լեցուն է, քան ինքը՝ բնությունը: Մասրենու բնույթը սահյանական է, որովհետեւ այստեղ մասրենին կերպավորում է ժամանակի դրամատիզմն իր մեջ կրող սահյանական մարդ տեսակը: Աշխարհի չարից փախչող «հողեղեն, հողոտ, հողածին» բանաստեղծն ինքնայրվում է, բայց բարիք է արարում ու տալիս աշխարհին, որովհետեւ խղճի բանաստեղծն ապրում է բնության հետ մտերիմ, մերձ, մշտապես հաղորդակից նրան՝ բնության նախաստեղծ ազնվությունն ընդունելով որպես բարձրագույն արժեք: «Քարափներից կախված մասրենիներ», «մասրենու կարմիր արտասուքներ», «կարմիր սարսուռներ», «ժայռից կաթող մասուրը», բառի գեղագիտության հրաշալի օրինակներ են:

Քարը: Հետաքրքիր է քարի ընտրությունը՝ որպես խորհրդանիշ: Քարը պատմություն է, հոգեւոր տարածք, բնավորություն, հոգեվիճակ, ժամանակ, հարազատ մարդ է, հավատ ու խաչքար, որն իր մեջ հիշողություն է պարունակում: Բնորոշ է Սահյանի «Քարը» վերնագրով բանաստեղծությունը, որն ամբողջությամբ տեսիլ-պատկեր է, որտեղ բառը հոգեզգացական վիճակ է արտացոլում, եւ տեսիլ պատկերների ու մետաֆորի կիրառությամբ բանաստեղծը

---

[45] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 363:*

տողից տող կերտում է բառի հիշողություն ունեցող կենսագրությունը.

Քարը՝ անցյալ եւ ապառնի,
Քարը՝ երթ…
Քարը՝ Գեղարդ, քարը՝ Գառնի,
Քարը՝ երգ[46]*:*

Սահյանն իր պոեզիայում հարազատ ժողովրդի քարե էպոսն է հյուսում, որտեղ մաքառումների, օրհասների խառն ու դառն օրերի միջով անցած հայը «քար է հունցել», «քար գնդել», «ճակատագրի հացը թխել», «…հետո վայրի քարը կրթել// Դրել է վանքիդ վեհության մեջ»: Եվ քարն է դարձյալ, որ հուշում է առասպելական անցյալները, հավերժությունն ու հավատը: Այստեղ քարը դիմացկունության, ամրության, հավիտենության խորհուրդն է կերպավորում: Քարի պատկերը իմաստավորվում է եւ դառնում ժողովրդի ու հայրենիքի կենսագրության խորհրդանիշը: Քարը՝ որպես բնության մասնիկ-պատկեր, զուգադրվում է մարդկային հատկանիշների հետ՝ դառնալով «թռիչք» ու «մատյան», «երթ» ու «երգ»: Այսպիսի հաջողված զուգադրությունները Սահյանի խոսքարվեստը հասցնում են բացառիկ ինքնատիպության ու կատարելության:

Քարափը: Քարափը ևս բանաստեղծի կենսատարածքի մասնիկն է: Պատահական չէ, որ նրա ժողովածուներից մեկը կրում է «Քարափների երգը» խորագիրը, որտեղ բանաստեղծը իր երազաշատ ժողովրդի հոգու թրթիռների երգն է հյուսում՝ բանաստեղծություն առ բանաստեղծություն կերտելով հայրենի եզերքի պատկերն ու երազների տաք ծվեն-

---

[46] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 212:*

ները, որտեղ մաշված կածանի բարակ թելը քարափների կողին ու ծնկների վրա է, որտեղ քարափները խորքերում գանձեր ունեն պահած եւ որտեղ քարափներն անմահ են ու կարապի երգ չունեն:

Եթե դու երբեւէ
Այս քարափին նայես,
Չկասկածես երբեք,
Որ ես նա եմ, նա՝ ես: [47]

Գերդաստանի, տոհմի, բնօրրանի հանդեպ պաշտամունքի գաղափարն է ընկած բանաստեղծության հիմքում, որտեղ պոետը դիմում է քարափին՝ իր խոհերն ու մտորումները, զգացմունքի գեղագիտությունը թարգմանելու համար: Քարափը «հյուրընկալ տերն է մանկության ձորի», «Քարափը նստել է ձորում նահապետորեն», «Քարափը նստել՝ երկինք էր կարդում, // Հետո փռում էր երկինքը քարին // Եվ քարափներից երկինք էր կաթում,// Եվ երկնքի մեջ քարափներ կային»: Այսպես կարելի է երկար շարունակել, քարափը բանաստեղծի կենսագրությունն է մարմնավորում:

Սահյանի երգած քարափը հայրենիքն է, որը հավերժական է, իսկ մարդը, որ մահկանացու է, «գնացող է»…Սակայն Սահյանն իր պոեզիայով դարձավ իր քարափների նման հավիտյան կանգուն ու իր ժողովրդի ուղեկիցը: Սահյանը բառի հանդեպ իրատեսական վերաբերմունք ունի, եւ նրա բառն իր մեջ կրում է պատմություն, վերաբերմունք, հոգեվիճակ: Քարափը, որ ունի շուրթեր, հոնքեր, ամուր մեջք, ձայն, եւ նրանց դարբնողը ժամանակն է, հավիտենական է ու մարդու հետ դաշնավորված, որովհետեւ մարդու միջոցով

---

[47] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 216:*

է քարափը դառնում քարափ ու կանգուն մնում հավիտյան: Քարափի, այսինքն՝ բնության ու մարդու փոխկանչը ի սկզբանե էր, որովհետեւ քարափի ոտքերի տակ «մի բուռ քնած հող» մարդը արթնանում է քարափի կանչից, նրան կենդանություն է տալիս հայրենի եզերքը, հարազատ քարափը, որի շուրթին սարսուռ ու դող է մարդը, որովհետեւ հարգանք ու խորին ակնածանք է տածում նրա՝ քարափի հանդեպ, որը պոետի համար արժեքներ կրող խորհրդանիշ է: Բառն այստեղ աշխարհագրական ու ժամանակային սահմաններ չի ճանաչում, պատկերը բնաշխարհի հավիտենության ասք է, եւ որտեղ հակադրվում են բնության անմահությունն ու մարդու անցողիկությունը, մինչդեռ բնության կանչով պայմանավորված՝ մարդը կարող է դառնալ հավիտենության ուղեկից:

Մանկություն: Մանկությունը բանաստեղծի ուղեկիցը եղավ ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում՝ սկսած նրա առաջին՝ «Որոտանի եզերքին» ժողովածուից մինչեւ «Ինձ բացակա չդնեք»-ը:

Սահյանի քնարերգության մեջ հայրենի եզերքը մանկությամբ է բուրում, եւ բանաստեղծն ինչքան հեռանում է մանկությունից, այնքան ավելի է մոտենում նրան: Մանկության պարզ ու անարատ աշխարհը բանաստեղծի համար մարդու եւ մարդկայինի կատարելությունն է, եւ պոետն իր հուշերի թեւերով, երազներով, սրտի մասերով անվերջ է փարվում մանկությանը, հայրենական տան ամեն մի քարին, որը նրա հուշերում խորհրդանշում է մանկությունը:

Մանկությունը բանաստեղծի համար այն եզերքն է, որտեղ պահպանվում է պոետի ինքնությունը, որտեղ անարատ են մնում մարդու հոգին ու ներաշխարհը ժամանակի խառն ու խրթին իրականության ազդակներից: Եթե Որոտա-

նը բանաստեղծի մանկության երգն է կրկնում, ապա բարդին կանաչ պատկերն է պոետի մանկության, ժայռերը կապույտ բերդերն են մանկության, եւ բանաստեղծը գտնում է բոլոր կորած գանձերը, երբ ելնում է մանկության զմրուխտե լեռը՝ Գյազբելը:

Բնության յուրաքանչյուր երեւույթ, մասնիկ բանաստեղծին իր մանկության աշխարհն են տեղափոխում՝ «Մուգ մանուշակներ Գյազբելա սարի,// Դուք իմ մանուշակ մանկության քույրեր…», «Գնամ մանկական սրինգս փնտրեմ // Չոբանների մոտ Գյազբելա սարի…», «Գնամ՝ մանկան պարզ կարոտով // Փարվեմ նորից լեռ ու գետին..», «Իմ մանկությունը քարայծերի հետ //Քարափների մեջ երկինք էր խմում, //Խորհուրդ էր անում քարափների հետ, //Քարայծերի հետ գիշերը քնում», «Ձորերս…նրանք// Օրորոցներն են մանուկ օրերիս, Մանկան աչքով եմ նայում ձորերիս»…

Մանկության աշխարհը Սահյանի համար այն երազային իրականությունն է, որը փնտրում, բայց չի գտնում երբեք, եւ այդ երազայինի ու իրականության հակադրությունն էլ մղում է անվերջ որոնումների ու արարումների.

Հովիտը՝ երկինք, երկինքը՝ հովիտ,
Քարը քարայծ է, քարայծը՝ քար.
Մանկության աշխարհ, ի՞նչ ասեմ հողիդ,
Ու որտե՞ղ գտնեմ քեզ պես աշխարհ…[48]

Մանկությունը հավատարիմ ընկերը եղավ բանաստեղծի: Բանաստեղծի մանկությունը նրա իմաստության ակունքներից մեկն է եղել, որն ամբողջ կյանքում սնել է նրա պոեզիան ու գեղարվեստական մտածողությունը: Գյուղի մանկանը կե-

---

[48] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 330:*

ռակրողը ոչ միայն տան հացն էր, այլեւ հանդի բարիքը: Մի առիթով Սահյանը հիշել է, որ դաշտերում կակաչի կոկոններ են կերել, որին «պուտածիծ» են ասել. «Այդպես հողը մոր պես մեզ ծիծ էր տալիս...»: Եվ հետեւում է համոզմունքը. «Չլիներ այդ դժվար եւ դժվարության մեջ երջանիկ մանկությունը, հնարավոր է, որ ես բանաստեղծ չդառնայի...»[49]:

Մանկությունը Սահյանի բանաստեղծական աշխարհում այն բառ-խորհրդանիշն է, որը զուգորդվում է մաքրության, անաղարտության, հայրենական տան, մտերիմ մարդկանց ու հայրենի եզերքի հետ, որի յուրաքանչյուր տարրը, մասնիկը նույնքան մտերիմ ու հարազատ է բանաստեղծին, որքան արյունակից բարեկամը: Բանաստեղծի համար մանկության աշխարհում մանուշակը քույր է, Որոտանի եզերքի ուռենին, քնքշաթեւ աղավնին՝ բանաստեղծի ճամփան սիրով պահող էակներ...Եվ բանաստեղծը երազում է մանկան աչքերով նայել աշխարհին՝ մանկության մաքրությունը տեսնելով միայն բնության մեջ.

Քո պարզությունը տուր ինձ, առավոտ,
Որ մանկան աչքով նայեմ աշխարհին,
Որ չտարբերեմ վայրկյանն ու տարին,
Քո պարզությունը տուր ինձ առավոտ[50]*:*

Բանաստեղծը վաղորդայնի պարզության մեջ տեսնում է մանկություն, որը թարմացնում է բանաստեղծի սիրտը, եւ համ կա այդ պարզության մեջ, որը ճամփի պաշար է ուզում դարձնել բանաստեղծը, ասել է թե՝ անաղարտությունն ու պարզությունն ընդունել որպես կերակուր, սնունդ, երկնային

---

[49] *«Սյունյաց երկիր», 2014,8 ապրիլ, էջ 2:*
[50] *Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 396:*

ու երկրային մանանա, որ աստվածային մաքրությունն է դարձյալ՝ մանկության աշխարհը:

Սահյանի ստեղծագործություններում գեղագիտական կոնտեքստը օրինաչափորեն պայմանավորված է տվյալ դարաշրջանի սոցիալ-պատմական պայմաններով: Դրսևորելով իր վերաբերմունքը սոցիալական այս կամ այն երևույթների նկատմամբ, որն արտահայտված է տխրության ու տառապանքի ձևով, Սահյանը բնության իր իդեալում է գտնում այն ստեղծագործական ներդաշնակությունը, որով ձևավորվում է նրա բանաստեղծության գեղագիտությունը:

Թեմա 5

Համո Սահյանը և գրական առնչությունները

5.1. Գրական առնչություններ

5.2. Համո Սահյանը և թարգմանական արվեստը

Ա. Գրական առնչություններ: Սահյանի գեղագիտական ըմբռնումները բազմատարր են, որի շղթան սկիզբ է առնում դեռեւս Գրիգոր Նարեկացուց, շարունակվում Սայաթ-Նովայով: Նրա պոետական աշխարհում զգացվում է նաև հայոց էպոսի շունչը: Բանաստեղծի գեղագիտական ըմբռնումների ձեւավորմանը մեծապես նպաստել են Թումանյանը, Մեծարենցը, Տերյանը, Գարսիա Լորկան, Եսենինը: Ձեւավորվելով որպես անկրկնելի քնարերգու՝ Սահյանն իր անխամրելի հետագիծը թողեց հայ գրականության անդաստանում:

Սահյանը այն քչերից է, որի ստեղծագործությունը մեծ ժողովրդականություն է վայելում: Եվ դա բացատրվում է այն «դժվար պարզությամբ», ինչպես Չարենցն է նշել, որ «ձեռք է բերվում դժվար վարժությամբ»: Եվ ոչ միայն. Սահյանի բանաստեղծական արվեստի ակունքները պիտի փնտրել մեր ժողովրդական բանահյուսության և ազգային մտածողության շերտերի մեջ, հանգամանք, որ մեծապես նպաստել է նրա խոսք ու պատկերների մատչելիությանը և, ի վերջո, գեղարվեստական ինքնատիպությանը: Թումանյանը գրականության զարգացման առաջին պայմանը համարում է ամուր կապը ժողովրդական բանահյուսության հետ: Իսկ Պարույր Սևակն ուղղակի ամրագրել է. «Բանահյուսությունն ունի իր անկրկնելի հմայքն ու հարստությունը: Եվ ամեն ազ-

գի գրող էլ, ծնվելով եւ մինչեւ մեռնելը, օգտվում է դրանից, ինչպես օդից…»[51]:

Սահյանի պոեզիան իր դասական կերտվածքով ու ժողովրդական մտածողությամբ ներքին աղերսներ ունի թե՛ թումանյանական, թե՛ տերյանական արվեստի հետ՝ երևույթի ամենադրական իմաստով: Բանահյուսական խոսքը հաճախ անփոփոխ ձևով բանաստեղծը ներկայացնում է պոետական իր կառույցի մեջ՝ ստեղծելով պատկերային մտածողության նոր որակ ու մակարդակ: Ահավասիկ. «Պորտը քարերին մաշած կածան», «Մի՞թե չի զարկում սիրտն այն սիրատենչ,//Որ ջուր էր խմում սրտից ամենքի», «Տարիքի մատը խառն է եղել», «Թող հողը թեթեւ լինի քեզ վրա…», «Եվ մահս՝ յոթ անգամ յոթ//Լեռան ետեւ է», «Գլուխները սարին ու քարին են տալիս», «Քթիցս կարծես ծուխ է բարձրանում…//Ինչու՞ է կորածն այսքան քաղցրանում» եւ այլն:

Երբ ստեղծագործությունը ակունքվում է բանահյուսությունից, նշանակում է այն իր իմաստասիրական շերտերով գնում է դեպի ժողովրդական մտածողություն, ինչը բնորոշ է հայ դասական բանաստեղծությանը:

Երգիս տունը տատիս տան պես
Հայկական է ու հին,
Ու կապված է սիրտս շան պես
Նրա ամեն քարին[52]*:*

Երգի տունը նոր իմաստ է ձեռք բերում Սահյանի տողերում, երբ այն համեմատում է «տատի տան» հետ: Դրանով բանաստեղծն ընդգծում է ոչ միայն բանաստեղծության ազ-

---

[51] *Սեւակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երեւան, 1974, էջ 260:*
[52] *Սահյան Հ., հ. 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 292:*

գային նկարագրի կարեւորությունը, այլ նաեւ նրա հարազատությունը՝ «հին»-ը ներկայացնելով որպես ժամանակի ու դիմացկունության որակ:

Ի դեպ, ժողովրդական բանարվեստից եկող այդ պատկերը, որը անխախտ հավատարմության մասին է խոսում, Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում բոլորովին այլ բովանդակության ու իմաստի մեջ է ներկայանում: Ահավասիկ.

Իմ անտուն գլուխ, տուն չես դառնա դու,
ինքդդ մարեցիր երդդ հայրենի
Վայ նրան, ով որ տուն ու տեղ ունի, կապված է
շան պես իրեն տան շեմին[53]*:*

Ինչպես տեսնում ենք, նույն երեւույթը երկու հեղինակների մոտ մեկնաբանվում է բոլորովին տարբեր տեսանկյունով:

Բանահյուսական մտածողությունն, այո, հատուկ է Սահյանի քնարին: Հաճախ բանահյուսում է հենց գրողը: Եվ նրա տողն է գնում դեպի ժողովուրդը՝ ձուլվելով նրա բառ ու բանին՝ «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ» կամ «Լեռան գագաթին օրն ուշ է մթնում» եւ այլն:

Սահյանի պոեզիայի գլխավոր երակը ուղիղ գծով գնում է դեպի մեր ազգային բանահյուսությունը: Ստեղծագործական իր հավատամքն այսպես է բանաձեւել ինքը՝ հեղինակը.«Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական (Քուչակ-Սայաթ-Նովա-Թումանյան) եւ ոգեղեն (Նարեկացի-Շնորհալի-Չարենց) գծի մեջտեղի բանաստեղծ՝ ես ձգտել եմ այն բանին, որ այս երկու թեւերը իմ մեջ ձուլվեն, խառնվեն իրար: Ես ձգտել եմ

---

[53] *Իսահակյան Ավ., Երկեր, հ. 2, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1974, էջ 65:*

ժողովրդական-ֆոլկլորային մտածողությունը դնել մյուս ձեւերի մեջ: Բայց, համենայնդեպս, ես պետք է խոստովանեմ, որ ժողովրդական մտածողությունն ինձ ավելի հարազատ է եղել: Իմ գրական հակումները բազմաթիվ կողմերով պայմանավորված են մեր լեզվով. մեր լեզուն մեր ազգային նկարագիրը լիովին պահպանել է»[54]:

Բ. Համո Սահյանը և թարգմանական արվեստը: Համո Սահյանի ստեղծագործական աշխարհի մասն են կազմում նաեւ նրա կատարած թարգմանությունները: Հայտնի է, որ թարգմանվող գրական երկը հազվադեպ է համարժեք լինում բնագրին: Սահյանի պարագայում իրադրությունը միանգամայն այլ է, որովհետեւ նա ձեռք է մեկնում այնպիսի հեղինակների՝ Պուշկին, Սերգեյ Եսենին, Յարոսլավ Սմելյակով, Ֆեդերիկո Գարսիա Լորկա, Պոլ էլյուար եւ այլք, որոնց պոետական մտածողությունն ու արվեստը, աշխարհընկալումն ու փիլիսոփայական հայացքները հոգեհարազատ են իրեն:

Համո Սահյանի թարգմանական արվեստն առանձնանում է իր յուրահատկությամբ, բնագրի ճշմարտացի վերարտադրությունն ուղեկցվում է գեղարվեստական պատկերների, բնագրի բովանդակության, ենթատեքստի, ստեղծագործության ընդհանուր կոլորիտի պահպանմամբ: Ասել է թե՝ Սահյանը թարգմանության մեջ պահպանում է ոչ միայն ձեւը, այլ նաեւ «ինքնության բուրմունքը»: Եվ դա, իրոք, դժվարին արվեստ է, որը պահանջում է գրական բարձր վարպետություն: Փորձենք մեր դիտարկումը ներկայացնել Եսենին-Սահյան պոետական զուգահեռի վրա: Բնության պաշտամունք, պատկերավոր մտածողություն, անմիջականություն, խոր հումանիզմ, հավատ ու սեր հայրենիքի հանդեպ. ահա եսենինյան պոեզիայի այն

---

[54] *«Այունյաց երկիր» թերթ, 8 ապրիլի, 2014թ., հ. 6, էջ 7:*

գլխավոր հատկանիշները, որոնք Սահյանին ոչ միայն կապել են ռուս մեծ պոետի աշխարհին, այլ նաեւ զգալիորեն նպաստել են նրա գեղագիտական աշխարհայացքի ձեւավորմանը: Ի դեպ, Սահյանը մի առիթով ասել է. «Իմ բանաստեղծական աշխարհի ճանապարհը ցույց է տվել Թումանյանը, իսկ բանալին Եսենինն է տվել»[55]:

Բնության երեւույթների փիլիսոփայական ընկալման ներքին ընդհանրությունների ու ըմբռնումների շնորհիվ է, որ Սահյանին հաջողվում է Եսենինի բանաստեղծությունը հայ ընթերցողին մատուցել ոչ թե «ապակու տակ դրված վարդի գեղեցկությամբ», այլ՝ իր ամբողջ բուրմունքով, բնականությամբ, պատկերային կառուցակարգերի ճիշտ վերարտադրությամբ՝ պահպանելով բնագրի ինքնատիպությունը:

Հայնրիխ Հայնեն ժամանակին նշել էր, որ հանճարները ձեւավորվում են մեկը մյուսով՝ ոչ այնքան ի հաշիվ նմանվելու, որքան հաղորդակցվելու հետեւանքով: Մի ալմաստը հղկում է մյուսին[56]: Եսենինյան բանաստեղծության սահյանական թարգմանության մասին կարելի է ասել, որ այն, հիրավի, երկու հանճարների յուրօրինակ հաղորդակցություն է:

Դա հատկապես երեւում է Եսենինի ու Սահյանի «Պապը» վերնագրով բանաստեղծություններից: Եսենինի պապը բնության հետ պորտալարով կապված մարդն է, մինչեւ մայրամուտ աշխատում է, բայց աշխատանքից չի խոնջանում, բնության հետ շփումը զորացնում է նրան. «*Մայրամուտ է: Պապն է շողում// Փայլար դարձած տեղով մեկ,// Եվ արեւի շողն է խաղում// Մորուքի մեջ նրա շեկ*[57]»:

---

[55] *Մկրտչյան Լ., Զրույցներ բանաստեղծի հետ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 168:*
[56] *Աֆորիզմներ, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1989, էջ 294:*
[57] *Եսենին Ս., Հատընտիր, «Հայպետհրատ», Երեւան, 1961, էջ 73:*

Հողի հետ մերձ է ապրում նաեւ Սահյանի պապը, նա բնության մի մասնիկն է, հողի հետ խորհում է, հողի հետ խոսում, ապրում է բնությամբ, եւ երկրային կյանքի ավարտից հետո էլ շարունակում է ապրել հողի հետ ձուլված. «*Եվ պապը ակոսում// Պառկել ու քնել է,// Խառնվել այն հողին,// Որ իրեն սնել է*[58]»:

Սահյանը եւս կյանքի ներդաշնակությունը փնտրում է հայրենի բնության մեջ: Ժամանակի ողբերգությունները, կեղծիքն ու սուտը, անարդարությունները եզակի նյարդով ընկալող բանաստեղծներին հաճախ են պատճառել հիասթափություն ու հոգնություն, շրջապատից օտարված լինելու զգացողություններ: Այս տրամադրությունների, հոգեբանական պայքարի, ներքին հակասությունների արդյունքի ծնունդ են Եսենինի «Դեռ այսքան հոգնած չեմ եղել կյանքում» եւ Համո Սահյանի «Հոգնել եմ արդեն» բանաստեղծությունները: Բուռն կյանքով ապրող Եսենինը վայելում է «հարբած գիշերներ, թախիծ, տրտմություն,// Խրախճանքի մեջ վշտեր դառնակեզ….», խորը ակնածանքով հիշում է միայնակ մորը, ինչպես նաեւ հայրենի դաշտերը, որոնք սիրելի են պոետին: Ի դեպ, նշենք, որ մանկության օրերի վերհուշն ու այն որպես մաքրության, անաղարտության խորհրդանիշ ընկալելը՝ զուգորդված հայրենի բնության հետ, հատուկ է նաեւ Սահյանի պոեզիային: Եվ դա պայմանավորված է ոչ միայն «եսենինյան դասերով», այլ նաեւ Սահյանի հոգեկերտվածքով: Եվ որքան էլ ընդհանրություններ ունենան, այնուամենայնիվ, երկու պոետների կերտած կերպարներն ու պատկերները, բնականաբար, բավականին հեռու են հերոսների ամբողջական նկարագրի տեսանկյու-

[58] *Սահյան Հ., Տոհմի կանչը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981, էջ 11:*

նից: Այստեղ պետք է շեշտել նաեւ ազգային այն հատկանիշների մասին, որոնք յուրատիպ գեղարվեստական մարմնավորում են ստանում գրական հերոսների կերպարներում: Արվեստի յուրաքանչյուր ճշմարիտ գործ, անշուշտ, կրում է ազգային բնավորության ու ճակատագրի դրոշմը:

«Երկնքի կապույտ ափսե», «դեղին ամպերի ծուխ», «ամպերին խառնված անտառի ծառերի կանաչ գանգուրներ»… այս եւ նման մետաֆորներով Եսենինը ստեղծում է մի պատկեր-բնանկար, որը բնության հետ խառնվելու յուրօրինակ ցանկության ուղղակի խոստովանություն է.

Ես կուզենայի պղտոր ծխի մեջ
Այն աստղով վառել անտառները խոր,
Նրանց հետ այրվել, բոցկլտալ անվերջ,
Ու երկինք թռչել շանթի նման խոլ[59]*:*

Հետաքրքիր դիտարկում է արել Գյոթեն՝ խոսելով թարգմանության մասին.«Թարգմանիչը նման է կավատուհու, որը գովաբանելով քողով ծածկված գեղեցկուհու արժանիքները, անհաղթահարելի ցանկություն է առաջացնում ծանոթանալու բնօրինակին»[60]: Սահյանի կատարած թարգմանություններն ընթերցողն ընդունում է բնօրինակի զգացողությամբ:

Համո Սահյանի թարգմանչական հետաքրքրությունները չեն սահմանափակվել միայն ռուս գրականությամբ: 20-րդ դարի իսպանական պոեզիայի նշանավոր դեմքերից մեկի՝ Ֆեդերիկո Գարսիա Լորկայի ստեղծագործությունները հայ ընթերցողին ներկայացավ Համո Սահյանի թարգմանությամբ: Ժամանակին Սահյանի եւ Լորկայի պոետական աշխարհների միջեւ առկա ներքին աղերսների մասին խոսել է

---

[59] *Եսենին Ս., Հատընտիր, «Հայպետհրատ», Երեւան, 1961, էջ 52:*
[60] *Աֆորիզմներ, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1989, էջ 272:*

ռուս պոետ եւ թարգմանիչ Լեւ Օզերովը՝ ընդգծելով գույնի գեղագիտական ընկալումների նրանց ընդհանրության մասին: «Քամին Ձեր մի բանաստեղծության մեջ նախ կանաչ է, ինչպես Լորկայի մոտ, հետո՝ կարմիր, հետո՝ դեղին, իսկ հետո՝ սպիտակ: Քամիների մի ամբողջ գամմա: Եվ դա խաղ չէ: Ձեր քամին կապույտ է (այնուամենայնիվ, կապույտը Ձեր սիրած գույնն է)»[61],- դիմելով Սահյանին՝ գրել է Լեւ Օզերովը:

Սահյանը մի առիթով նշել է, որ այն, ինչ ինքը շատ է սիրում, հեռու է իրենից, իսկ հեռուն կապույտ է՝ կապույտ հուշեր, կապույտ մանկություն… Գունային նույն այս համանվագը հետաքրքիր լուծումներ ունի Լորկայի պոեզիայում: Նրա «Կանաչ երկնքի խորքերում» բանաստեղծության մեջ գերիշխում է կանաչը, որը միաժամանակ խորհրդանշում է նաեւ հեռուն.

Կանաչ երկնքի կանաչ խորքերում
Կանաչ աստղերի փայլեր կան կանաչ:
Ինչպե՞ս անենք, որ սերը չմեռնի:
Ի՞նչ կպատահի, ո՞վ գիտե արդյոք[62]:
Կամ՝

Իմ տագնապները ես պիտի ներկեմ
Կարմիր ժպիտով:

Գունային համադրումները մարդկային բնավորությունների, հոգեվիճակների, ապրումների հետ պատահական չպետք է համարել: Լորկայի բերած բառերի եւ գույների արանքում ծնվում է բանաստեղծական ճշմարտությունը: Պոետի ստեղծագործություններում մշտապես առկա է մարդու

---

[61] *Սահյան Հ., Սեզամ, բացվիր, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1972, էջ 270:*
[62] *http://hs-poetry.blogspot.com*

ներքին դրաման: Ներհայեցողությունը, որ բնորոշ է Սահյանի բնափիլիսոփայությանը, Լորկայի պոետական աշխարհի համար եւս բնութագրական է: Մենակությունը, լռությունը, աշխարհի եւ պոետի իդեալի փոխհարաբերության խզումը ծնում են ներքին հակասություններ, եւ դառնացած բանաստեղծն իր սփոփանքը գտնում է բնության մեջ.

Ամեն ինչ խզվել է աշխարհում,
Ամեն ինչ լցվել է լռությամբ:
(Ուզում եմ մեն-մենակ արտասվել
Դաշտերում):
Խարույկի, խարույկի սուր լույսից,
Մութ հեռուն ընկել է վիրավոր:
(Ինձ մենակ թողեք դաշտերում,
Միայնակ,
Մենավոր...)[63]*:*

«Երեւակայության եւ ներշնչանքի մասին» հոդվածում Լորկան գրում է, որ բանաստեղծը լսում է մեծ գետերի սահքը, նրա դեմքին է դիպչում եղեգնուտի թարմությունը...Նա ուզում է հասկանալ մրջյունների խոսակցությունն անիմանալի տերեւների տակ: Ուզում է ներթափանցել ծառի ավիշով ծանր բների մառ լռության մեջ[64]: Ասել է թե՝ բանաստեղծը մշտապես երկխոսության մեջ է աշխարհի հետ, եւ բնապաշտի պոետական անկեղծությունն ու ճշմարտությունը պայմանավորում են բնության հետ մերձ լինելու աստիճանը: «Դողդոջ աղջամուղջ», «լուսնի հոտավետ ցուրտ», «դեմքը հողին խոնարհած լռություն», «աշնան խոնավ ողբերգություն», «նոճու տնքացող սեւ ստվեր» եւ այլ մետաֆորներ

[63] *Նույն տեղում:*
[64] *https://armspanish.wordpress.com*

Լորկայի պոեզիան դարձնում են բնության իմաստավորված արձագանքը:

Շարունակելով Պարույր Սեւակի միտքը՝ Սահյանը մի առիթով նշել է, որ թարգմանում է այն բանաստեղծությունները, որոնք ինքը պետք է գրած լիներ, բայց իրեն կանխել են նրանց հեղինակները. «Թարգմանությունները դառնում են քո ստեղծագործության մի մասը: Եվ եթե դու թարգմանում ես, ասենք, ռուս կամ իսպանացի բանաստեղծներին, եւ նրանք քո թարգմանության մեջ դառնում են մի քիչ հայ, նշանակում է դու՝ թարգմանիչդ էլ դառնում ես մի քիչ ռուս, մի քիչ իսպանացի»[65]:

Համո Սահյանը գործեր է թարգմանել ֆրանսիական գրականությունից: Շեշտադրված հումանիզմը, աշխարհը ճշմարտացիորեն տեսնելու սուր դիտողականությունն ու այն գեղագիտորեն պատկերելու վարպետությունը, մարդը եւ նրա ներաշխարհը, ազատությունն ու նրա իրավունքների համար պայքարն են ընկած Պոլ Էլյուարի պոեզիայի առանցքում, ինչը, բնականաբար, չէր կարող վրիպել Սահյանի ուշադրությունից: Նկատենք մեկ այլ կարեւոր հանգամանք եւս: Առհասարակ գրողի ստեղծագործական ուղին բնորոշվում է նրա ապրած ժամանակաշրջանով եւ կրում է ժամանակի կնիքը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ֆրանսիական գրականության մեջ գլխավոր էին ռեալիստական եւ էքզիստենցիալիստական ուղղությունները: Բնականաբար, Պոլ Էլյուարի ստեղծագործությունները չէին կարող դուրս լինել ժամանակից: Պատերազմից հետո բանաստեղծները սկսեցին գործ ունենալ այնպիսի հասկացությունների հետ, որոնք ընդհանրական են ֆաշիզմի դեմ պայքար մղած եւ հաղթանակած

---

[65] *Մկրտչյան Լ., Զրույցներ բանաստեղծի հետ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 180:*

ազգերի գրողների համար: Էքզիստենցիալ մտածողությունը, որի հետ աղերսվում է Սահյանի փիլիսոփայությունը, ընկած է նաեւ Պոլ Էլյուարի փիլիսոփայական-գեղագիտական կոնցեպցիայի առանցքում.

Մի թոկ խեղդեց տասը մարդու,
Վառվող մի ջահ այրեց ծաղկած ճոխ մի քաղաք,
Անկոչ մի մարդ նսեմացրեց մի ժողովուրդ:
Ահա կատուն մեծանում է ուրախ, անհոգ,
Ապրում է նա որպես կապույտ խեցիի մեջ
Մի մարգարիտ,
Իսկ երբ խաղաղ գիշերը գա,
Ինքը կուտի իր ձագերին[66]*:*

Այս բանաստեղծությունը ահազանգի պես է հնչում աշխարհում տիրող անարդարությունների մասին: Սա մարդու նկատմամբ մարդ լինելու կոչ է: Բարությունը, մարդկային խիղճը հեղինակի համար փիլիսոփայական սկզբունքներ են, մարդկության համար՝ պահանջմունք: Այստեղ մենք հաղորդակից ենք դառնում բանաստեղծական անկեղծ խոստովանության՝ առանց պաճուճված խոսքերի ու պատկերների:

Երկինքը պարզ է, երկիրը՝ մթին,
Բայց ծուխը դեպի երկինք է գնում,
Երկինքը կորցրեց իր կրակները,
Իսկ բոցը մնաց այս երկրի վրա[67]*:*

Խաղաղության, մարդու ազատության համար պայքարող բանաստեղծը տեսնում է, որ «երկիրը մութ է», եւ միայն մարդը

---

[66] *Ֆրանսիական պոեզիա, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 1984, էջ 384:*
[67] *Նույն տեղում:*

կարող է իր հումանիզմով ցրել այդ խավարը, ինչին էլ ուղղվում են ճշմարիտ բանաստեղծների մտասեւեռումներն ու պոետական խոսքը: Պոլ Էլյուարի պոետական մտածողությունը բնորոշող բանաստեղծություն է «Բարի արդարություն»-ը, որտեղ պոետն առաջ է քաշում կյանքի մի քանի սկզբունքներ. «Մնալ անաղարտ, // Հակառակ պատերազմների ու թշվառության,// հակառակ մահվան», «փոխել թշնամիներին եղբայրների», իսկ դեպի կատարելություն «քայլող օրենքն սկիզբ է առնում երեխայի սրտի խորքից», ինչպես բարին, արդարը, ճշմարիտը, գեղեցիկն ու ազնիվը… Գեղագիտական այս մոտեցումներն են միավորում Սահյանի եւ Պոլ Էլյուարի ստեղծած պոետական «տարածքները», որտեղ գերագույն արժեքը մարդն է՝ իր խնդիրներով, գոյության փիլիսոփայությամբ:

Ավելորդ չենք համարում նշել, որ թարգմանական գործը հայ իրականության մեջ իր առանձնահատուկ տեղն ու դերն ունի մշտապես: Պարբերական մամուլն ու գրականագիտական միտքը հաճախ են անդրադառնում մեզանում թարգմանական գործի զարգացման խնդիրներին, կատարվում գիտահետազոտական աշխատանքներ, արժեւորվում ձեռքբերումները: Լինում են, իհարկե, նաեւ հակասական կարծիքներ: Գրականագետ Դավիթ Գասպարյանը, խոսելով Համո Սահյանի թարգմանությունների մասին, նկատում է. «…եթե առանձնացնենք այս բնագավառը, ձեւակերպենք եւ ասենք՝ Սահյանը թարգմանիչ, չեմ կարծում, թե կինչի: Կար ժամանակ, երբ թարգմանություններ էին անում փող աշխատելու նպատակով: Դա ես բնորոշել եմ որպես թարգմա-

նական ինդուստրիա: Համո Սահյանը չգնաց այդ ճանապարհով, բայց ինչ որ արել է, արել է իր նման»[68]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Համո Սահյանի բնապաշտական երկերը, ինչպես նաեւ նրա հետաքրքրությունները ռուս եւ համաշխարհային գրականության կոթողների նկատմամբ՝ կարող ենք ասել, որ Սահյանի ստեղծագործությունների բնապաշտության բովանդակային հենքը բնության եւ մարդու միաձուլման ու ներդաշնակության մեջ է: Թերևս այսպես է հեղինակը հաստատում գեղագիտական իր դավանանքը:

[68] *Այունյաց երկիր, համար 6, ապրիլի 8, 2014թ, էջ 31:*

II. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուները

Քննարկման առաջադրվող հարցեր

1. Պանթեիզմը՝ որպես փիլիսոփայական ուսմունք և նրա դրսևորումը Համո Սահյանի պոեզիայում:
2. Բնաշխարհը՝ որպես մարդու և մարդկայինի մեկնության բանալի:
3. Խոհափիլիսոփայությունը՝ բնապաշտական երկերում:
4. Սիրո էվոլյուցիան:
5. Գրողի դավանած ազգային և համամարդկային արժեքները:

Առաջադրանքներ

1. Բացատրել՝ ինչ է պանթեիզմը և նշել Համո Սահյանի պոեզիայի հիմնական առանձնահատկությունները:
2. Լրացնել դատարկ վանդակները.

ՀՀ	Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուների ցանկ	Հրատարակման թվական
1	Որոտանի եզերքին	
2		1953
3	Բարձունքի վրա	
4	Նաիրյան դալար բարդի	
5	Հայաստանը երգերի մեջ	
6	Մայրամուտից առաջ	
7		1968

8		1970
9	Սեզամ, բացվիր	

2. Հայրենիքի պատմական ճակատագրի գեղարվեստական արտացոլումը Հ. Սահյանի պոեզիայում

Քննարկման առաջադրվող հարցեր

1. Պատմաքաղաքական իրադարձությունների գեղարվեստական խտացումը Հ. Սահյանի պոեզիայում
2. Հայաստանը մինչ խորհրդայնացումն ու խորհրդային կարգեր հաստատվելուց հետո:
3. Խորհրդային կարգերի բերած աղետները:
4. Մեծ Հայրենական պատերազմի շրջանը:
5. Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժումը և անկախության տարիներ:

Առաջադրանքներ

1. Առանձնացնել վերոնշյալ թեմաներով գրված բանաստեղծությունները և վերլուծել:
2. Ցույց տալ և բնութագրել պատմական տարբեր ժամանակաշրջանների գեղարվեստական արտացոլումը «Հայաստանը երգերի մեջ» ստեղծագործությունում:
3. Բնութագրել Կոմիտասի կերպարը Համո Սահյանի պոեզիայում և համեմատել մյուս գրողների ստեղծագործություններում պատկերված Կոմիտասի կերպարի հետ, նշել ընդհանրությունները, տարբերությունները և սիմվոլիկան:

3. Սահյանի բնապաշտական պոեզիան՝ որպես հայրենիքի առջև ծառացած խնդիրների արձագանք

Քննարկման առաջադրվող հարցեր

1. Ազգային ինքնության պահպանման խնդիր:
2. Արտագաղթի խնդիր:
3. Մայրենի լեզվի պահպանման խնդիր:
4. Ազգային արժեհամակարգի պահպանման խնդիր:
5. Սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ խնդիրներ:

Առաջադրանքներ

1. Առանձնացնել այն ստեղծագործությունները, որտեղ հեղինակն անդրադարձել է վերոնշյալ խնդիրներին և վերլուծել:

2. Ուսումնասիրել և նշել այլ հեղինակների կողմից ստեղծված գործեր, որտեղ գաղափարական հիմքում վերոնշյալ խնդիրներն են: Վերլուծել, կատարել համեմատություններ, ցույց տալ ժամանակի տագնապների զգացողության, դրանց գեղարվեստական արտացոլման հեղինակային առանձնահատկությունները:

4. Հ. Սահյանի բնապաշտական պոեզիայի արդիական ընկալումները

Քննարկման առաջադրվող հարցեր

1. Վեր հանել Համո Սահյանի բնապաշտական պոեզիայի իմաստասիրական շերտերը:

2. Հումանիզմի շեշտադրումը:

3. Մարդկային գոյի և կյանքի իմաստի փիլիսոփայությունը:

4. Մարդկային առաքինությունների, բարոյական նորմերի, ազգային արժեքների շեշտադրումները:

5. Քաղաքակրթության զարգացմանը զուգահեռ բնության նախաստեղծ անաղարտությունից մարդու օտարման տագնապի խնդիրը:

Առաջադրանքներ

1. Առանձնացնել և վերլուծել այն ստեղծագործությունները, որոնց հիմքում ընկած է «Մարդն իր կորցրած ազնվությունը բնությամբ կարող է վերագտնել» գեղագիտական դավանանքը:

2. Ներկայացնել հայոց պետականության և ժամանակակից հայ մարդու (և առհասարակ մարդու՝ անկախ ազգային պատկանելությունից) առջև ծառացած առանցքային խնդիրները, որոնել այդ խնդիրների արձագանքները Հ. Սահյանի պոեզիայում: Ուսումնասիրել և վերլուծել այդ ստեղծագործությունները, գնահատել դրանց արդիականության աստիճանը:

5. Գրականագիտությունը՝ Հ. Սահյանի մասին

Քննարկման առաջադրվող հարցեր

1. Համո Սահյանը Դավիթ Գասպարյանի «Համո Սահյան. կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունում:

2. Համո Սահյանը Սուրեն Աղաբաբյանի, Շչորս Դավթյանի, Հարություն Հովնաթանի, Լևոն Հախվերդյանի աշխատություններում:

3. Համո Սահյանը հայ և օտարազգի գրողների գնահատմամբ /Էդուարդաս Մեժելայտիս, Լև Օզերով, Ստանիսլավ Ռասսադին, Ստեփան Զորյան, Գուրգեն Մահարի, Նաիրի Զարյան, Հրանտ Մաթևոսյան, Սիլվա Կապուտիկյան, Վահագն Դավթյան և ուրիշներ/:

4. Համո Սահյանը՝ գրականության և գրաքննադատության մասին:

5. Համո Սահյանը՝ համաշխարհային գրականության մասին. թարգմանական արվեստը:

Առաջադրանքներ

1. Ուսումնասիրել և ներկայացնել Համո Սահյանի պոեզիային նվիրված գրականագիտական աշխատությունները, նամակները, հուշագրությունները:

2. Ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել Համո Սահյանի բանաստեղծությունների թարգմանություններն այլ լեզուներով, տանել զուգահեռներ բնագրի և թարգմանված գործի միջև:

3. Ցույց տալ Համո Սահյան-հայ և համաշխարհային գրական աղերսները.

4. Համո Սահյան-Գրիգոր Նարեկացի-Նահապետ Քուչակ-Սայաթ-Նովա-Հովհաննես Թումանյան:

5. Համո Սահյան-Սերգեյ Եսենին-Գարսիա Լորկա:

III. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Պարտադիր ընթերցանության ցանկ

1. Համո Սահյան, «Որոտանի եզերքին»
2. Համո Սահյան, «Առագաստ»
3. Համո Սահյան, «Սլացքի մեջ»
4. Համո Սահյան, «Ծիածանը տափաստանում»
5. Համո Սահյան, «Բարձունքի վրա»
6. Համո Սահյան, «Նաիրյան դալար բարդի»
7. Համո Սահյան, «Հայաստանը երգերի մեջ»
8. Համո Սահյան, «Մայրամուտից առաջ»
9. Համո Սահյան, «Քարափների երգը»
10. Համո Սահյան, «Տարիներս»
11. Համո Սահյան, «Սեզամ, բացվիր»
12. Համո Սահյան, «Կանչե, կռունկ»
13. Համո Սահյան, «Իրիկնահաց»
14. Համո Սահյան, «Ժայռից մասուր է կաթում»
15. Համո Սահյան, «Կանաչ-կարմիրաշուն»
16. Համո Սահյան, «Տոհմի կանչը»
17. Համո Սահյան, Երկեր հ. 1
18. Համո Սահյան, Երկեր հ. 2
19. Համո Սահյան, «Դաղձի ծաղիկ»
20. Համո Սահյան, «Աստվածս՝ ցորենին ասեմ»
21. Համո Սահյան, «Ինձ բացակա չդնեք»
22. Համո Սահյան, Հատընտիր
23. Համո Սահյան, «60 ու 1 հայրեն»
24. Համո Սահյան, «Արցունքով լվացված սերեր»
25. Համո Սահյան, «Քարե պատարագ», հատընտիր

2. Ռեֆերատների թեմաներ

1. Համո Սահյանը և պանթեիզմը:
2. Բնապաշտությունը Համո Սահյանի պոեզիայում:
3. Խոհափիլիսոփայությունը Համո Սահյանի բնապաշտական պոեզիայում:
4. Գույնը՝ որպես գեղագիտական միավոր Համո Սահյանի պոեզիայի պատկերավորման համակարգում:
5. Բույրը՝ որպես գեղագիտական միավոր Համո Սահյանի պոեզիայի պատկերավորման համակարգում:
6. Ձայնը՝ որպես գեղագիտական միավոր Համո Սահյանի պոեզիայի պատկերավորման համակարգում:
7. Սիրո էվոլյուցիան Համո Սահյանի ստեղծագործություններում:
8. Մանկությունը՝ որպես ստեղծագործական ոգեշնչման ակունք:
9. Բնության և մարդու հարաբերությունը Սահյանի պոետական աշխարհում:
10. Բնության բանականացման երևույթը Հ. Սահյանի բանաստեղծություններում:
11. Պատկերավորման համակարգի առանձնահատկությունները:
12. Բառ-խորհրդանիշների կիրառումը Հ. Սահյանի պոեզիայում:
13. Աշխարհագրական տեղանուններն ու դրանց սիմվոլացումը Հ. Սահյանի պոեզիայում:
14. Հայրենիքի թեման Հ. Սահյանի բնապաշտական երկերում:
15. Հումանիզմի շեշտադրումները:
16. Համո Սահյանը և բանահյուսական մտածողությունը:

17. Կոմիտասի կերպարն ու հայ երգի ճակատագիրը Համո Սահյանի երկերում:

18. Հայրենի տան խորհրդանիշը Հ. Սահյանի պոեզիայում:

19. Նորի և ավանդականի համադրությունը Հ. Սահյանի պոեզիայում:

20. Հ. Սահյանի հայրենները:

21. Հ. Սահյանի պոեզիայի արդիականությունը:

22. Հ. Սահյանի թարգմանական արվեստը:

23. Հ. Սահյանի պոետիկայի առանձնահատկությունները:

24. Պապի կերպարը Հ. Սահյանի պոեզիայում:

25. Հավերժության թեման Հ. Սահյանի պոեզիայում:

26. Մասրենու խորհրդանիշը:

27. Համո Սահյան բանաստեղծի հոգևոր ակունքները:

28. Հայրենիքի պատմական ժամանակը Հ. Սահյանի ստեղծագործություններում:

29. Բառի գեղագիտությունը:

30. Տառապանքից ազնվացող մարդը Հ. Սահյանի երկերում:

3. Ինքնաստուգման թեստեր

1. Հ. Սահյանն ո՞ւմ մասին է գրել.

Դուք հոր նման խիստ եք եղել
Ու հոր նման ներող,
Ձեր խորհուրդը խորն է եղել
Ու խրատը՝ գերող:

ա. Ավետիք Իսահակյանի
բ. Ստեփան Զորյանի
գ. Նաիրի Զարյանի

2. Որտե՞ղ է ծնվել Համո Սահյանը:
ա. Լոր
բ. Զանգակատուն
գ. Գանձա

3. Համո Սահյանը ո՞ր գրքի համար է 1975 թ. արժանացել Հայաստանի ԽՍՀ պետական մրցանակի դափնեկրի կոչման:
ա. «Քարափների երգը»
բ. «Սեզա՛մ, բացվի՛ր»
գ. «Որոտանի եզերքին»

4. Ո՞րն էր Հ. Սահյանի տպագրված առաջին գիրքը:
ա. «Նաիրյան դալար բարդի»
բ. «Որոտանի եզերքին»
գ. «Առագաստ»

5. Լրացնել բաց թողնված բառը.
Համո Սահյանն ասել է. «Չլիներ այդ դժվար և դժվարության մեջ երջանիկ…., հնարավոր է, որ ես բանաստեղծ չդառնայի»:
ա. երիտասարդությունը
բ. միամտությունը
գ. մանկությունը

6. Ո՞ր պնդումն է ճիշտ.
ա. Հ. Սահյանը գյուղագիր է:
բ. Հ. Սահյանը բնապաշտ գրող է:
գ. Հ. Սահյանը կլասիցիզմի ներկայացուցիչ է:

7. Ի՞նչ է պանթեիզմը:

ա. իրապաշտություն

բ. խորհրդապաշտություն

գ. համաստվածություն

8. Ո՞ր պնդումն է ճիշտ.

ա. Որքան մենք խորամուխ ենք լինում Սահյանի պոեզիայի մեջ, այնքան առնչվում ենք բնության նկարագրության հետ, որի արդյունքում նրա բանաստեղծությունը դառնում է զուտ բնության մակերեսային նկարագրություն՝ առանց փիլիսոփայական ենթաշերտերի ու մտահայեցության:

բ. Որքան մենք խորամուխ ենք լինում Սահյանի պոեզիայի մեջ, այնքան առնչվում ենք ոչ միայն բնության, այլև մարդու էության բացահայտման ու ճանաչման մտահայեցողական բանաձևումներին, որի արդյունքում բանաստեղծի գեղարվեստական մտածողությունը թե՛ մարդկային անհատական ու թե՛ ընդհանրացված կերպարների վերարտադրությունը դարձնում է դիպուկ ու անշեղ:

գ. Բոլոր պնդումները ճիշտ են:

9. Ու՞մ խմբագրությամբ է լույս տեսել Համո Սահյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն:

ա. Վահագն Դավթյանի

բ. Սիլվա Կապուտիկյանի

գ. Ստեփան Զորյանի

10. Ո՞ւմ կերպարն է կերտել Հ. Սահյանը հետևյալ բանաստեղծությունում:

Քո երգերի մեջ գութանի վար է,

Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,

Սիրավոր լոր է ու Սոնա յար է,
Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ:
ա. Արամ Խաչատրյանի
բ. Պարույր Սևակի
գ. Կոմիտասի

11. Ո՞րն է քառատողում բաց թողնված բառը:
....., անունդ տալիս
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
Ալևոր կամուրջի հոնքին
Ծիծառի մի բույն եմ հիշում...
ա. Լորագետ
բ. Հայաստան
գ. Մասրենի

12. Ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուներից:
ա. «Կանաչ-կարմիր աշուն»
բ. «Ճերմակ ու բիլ ձմեռ»
գ. «Կանաչ-կարմիր գարուն»

13. Աշխարհագրական տեղանուններից ո՞ր շարքն է ամբողջությամբ կիրառվում Հ. Սահյանի պոեզիայում:
ա. Հայաստան, Որոտան, Աղոթարան, Լորագետ, Գյազբել:
բ. Արագած, Արարատ, Սիս, Մասիս, Նեմրութ, Նեղոս:
գ. Հայաստան, Տիգրանակերտ, Վասպուրական, Տղմուտ, Աթենք:

14. Ո՞րն է Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուի վերնագիր:

ա. «Քարերի երգը»

բ. «Քարափների երգը»

գ. «Քարաժայռերի երգը»

15. Ո՞րն է հետևյալ բանաստեղծության վերնագիրը:

Դու իմ միակն էիր, ինչպես Հայաստանս,
Տանս ճրագն էիր և ծուխն էիր տանս:
Քոնը՝ իմն էր, իմը՝ քոնն էր հավիտյանս,
Դու իմ միակն էիր, ինչպես Հայաստանս:

ա. Մայրս

բ. Հայրս

գ. Յարս

16. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա. «Սահյանը թեպետ մոտ է կանգնած բնությանը, սակայն առավել մոտ է նրա հոգուն քաղքենիությունը: Նյութապաշտություն և կոսմոպոլիտիզմ. սա է Համո Սահյանի բանաստեղծության տարերքը»:

բ. «Սահյանը մոտ է կանգնած բնությանը, սակայն առավել մոտ է նրա հոգուն մարդը: Բնություն եւ մարդ՝ սա է Համո Սահյանի բանաստեղծության տարերքը»:

գ. «Սահյանը մոտ է կանգնած բնությանը, սակայն առավել մոտ է նրա հոգուն քաղաքը: Տեխնիկա, քաղաքակրթության վազք, փախուստ բնությունից. սա է Համո Սահյանի բանաստեղծության տարերքը»:

17. Համո Սահյանի պոեզիայի առանձնահատկություններից է.

ա. Գույնը, բույրը, ձայնը՝ որպես պատկերավորման համակարգի գեղագիտական միավոր:

բ. Պատմական սյուժեների վերափոխումը՝ որպես գրական հնարանք:

գ. Ստոիցիզմը:

18. Համո Սահյանի բանաստեղծությունների ո՞ր ժողովածուն է լույս տեսել հետմահու, և հեղինակը չի հասցրել տեսնել տպագրված:

ա. «Ժայռից մասուր է կաթում»

բ. «Կանաչ-կարմիր աշուն»

գ. «Ինձ բացակա չդնեք»

19. Համո Սահյանի պոեզիան բարձր է գնահատել

ա. Լև Տոլստոյը

բ. Լև Օզերովը

գ. Լև Գումիլյովը

20. Ո՞ր տողերի հեղինակն է Հ. Սահյանը:

ա. Երանի նրան, ով հայրենական տուն ունի հիմա:

բ. Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս
բախտազուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ:

գ. Չտեսնեի, մեր երդի ծուխ,
Քեզ կտրված չտեսնեի:

21. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա. Համո Սահյանը գրել է հանելուկներ:

բ. Համո Սահյանը գրել է առակներ:

գ. Համո Սահյանը գրել է հայրեններ:

22. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա. Համո Սահյանը 1941-1945 թթ. մասնակցել է Մեծ Հայրենական պատերազմին, ծառայել ռազմածովային նավատորմում:

բ. Համո Սահյանը 1941-1945 թթ. մասնակցել է Մեծ Հայրենական պատերազմին, ծառայել ավիացիոն զորքերում:

գ. Համո Սահյանը 1941-1945 թթ. չի մասնակցել Մեծ Հայրենական պատերազմին:

23. Ո՞ր բանաստեղծության գրության շարժառիթի մասին է Հ. Սահյանի այս վերհուշը. Վոլգայի ափին, նավի տախտակամածին միայնակ կանգնած, աչքին պատկերանում է հայրենի գյուղը, գյուղից դուրս բարձունքի վրա գտնվող բարդին. «Ես շոշափելու չափ որոշակի զգացի նրա խշշոցը…»

ա. «Բարդիները խշշացին»

բ. «Նաիրյան դալար բարդի»

գ. «Բարդիների պուրակում»

24. Ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուի անվանում:

ա. «Դաղձի ծաղիկ»

բ. «Խնկի ծաղիկ»

գ. «Ծաղկած բալենի»

25. Համո Սահյանը թարգմանել է.

ա. Ս.Եսենին, Ալ. Պուշկին, Գարսիա Լորկա:

բ. Լև Տոլստոյ, Բալզակ, Մոպասան:

գ. Շ. Բոդլեր, Ի. Բրոդսկի, Պ. Ներուդա:

26. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա. Սյունյաց աշխարհի բնության անկրկնելի գեղեցկություններին զուգադրելով հասարակական-սոցիալական կյանքի երեւույթները՝ Սահյանն ընդգծված ձեւով ներկայացնում է իրականության ողբերգական, ստվերոտ կողմերը:

բ. Սյունյաց աշխարհի բնության անկրկնելի գեղեցկություններին զուգադրելով հասարակական-սոցիալական կյանքի երեւույթները՝ Սահյանը չի անդրադառնում իրականության ողբերգական, ստվերոտ կողմերին:

գ. Սյունյաց աշխարհի բնության անկրկնելի գեղեցկություններին զուգադրելով հասարակական-սոցիալական կյանքի երեւույթները՝ Սահյանն ընդգծված ձեւով ներկայացնում է կեղծված իրականություն:

27. Ո՞ր տողի հեղինակն է Համո Սահյանը:

ա. Հայ լեզուն տունն է հայուն:

բ. Ինչու՞չես խոսում հայերեն:

գ.Գարունդ հայերեն է գալիս:

28. Ո՞ր բառն է բաց թողնված հետևյալ հատվածում.

Բախտիդ ճակատը պիտի համբուրես
Եվ շնորհակալ պիտի լինես դու
Երջանիկ ու մեծ քո .....

ա. զավակներից

բ. տառապանքից

գ. ծնողներից

29. Ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուի անվանում:

ա. «Տոհմի կանչը»

բ. «Տոհմի ասքը»
գ. «Տոհմի ուխտը»

30. Ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուի անվանում:
ա. «Իրիկնահաց»
բ. «Իրիկնաժամ»
գ. «Իրիկնամուտ»

31. Ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուի անվանում:
ա. «Մայրամուտից առաջ»
բ. «Մայրամուտից հետո»
գ. «Մայրամուտ՝ Մասյաց գագաթին»

32. Ըստ Հ. Սահյանի բանաստեղծության՝ որտե՞ղ է օրն ուշ մթնում:
ա. Լեռան ստորոտին օրն ուշ է մթնում:
բ. Լեռան գագաթին օրն ուշ է մթնում*
գ. Լեռան եզերքին օրն ուշ է մթնում:

33. Ո՞ւմ մասին է գրել հետևյալ տողերով բանաստեղծությունը:
Անհնար է հավատալ,
Որ չկաս իրոք,
Դու իմ եղբայր, դու իմ պապ,
Իմ գիժ, իմ խելոք:
ա. Եղիշե Չարենցի
բ. Ակսել Բակունցի
գ. Պարույր Սևակի

34. Ու՞մ հետ է երկխոսում հեղինակը հետևյալ քառատողով բանաստեղծությունում, որը բաց թողնված բառն է

…., ինձ հաճախ
Ապտակում էիր
Սխալիս համար
Եվ սաստում էիր,
Որ լաց չլինեմ:

ա. Մայրիկ
բ. Հայրիկ
գ.Պապիկ

35. Ո՞ր տողն է բաց թողնված հետևյալ քառատողում.

Ձեր լռությունը զնգում,
Զրնգում է ձորով մեկ,
Ձեր լռության համերգում

ա. Ինձ աչքաթող չանեք:
բ. Ինձ բանաստեղծ չկոչեք:
գ. Ինձ բացակա չդնեք:

36. Ո՞ր ժողովածուից է «Իրիկնահաց» բանաստեղծությունը:

ա. «Իրիկնահաց»
բ. «Մայրամուտից առաջ»
գ. «Սեզամ, բացվիր»

37. Համանուն բանաստեղծության մեջ ինչի՞ անվանում է Աղոթարանը

ա. գետի
բ. սարի
գ. դաշտավայրի

38. Ո՞վ է «Համո Սահյան. բանաստեղծը, մտածողը, մարդը» գրքի հեղինակը:

ա. Դավիթ Գասպարյան

բ. Հարություն Հովնաթան

գ. Շչորս Դավթյան

39. Ո՞վ է «Համո Սահյան բանաստեղծի հավատամքը» գրքի հեղինակը:

ա. Հրանտ Մաթևոսյան

բ. Շչորս Դավթյան

գ. Սուրեն Աղաբաբյան

40. Ո՞վ է «Խոսում, խոսեցնում է Համո Սահյանը» գրքի հեղինակը:

ա. Հարություն Հովնաթան

բ. Շչորս Դավթյան

գ. Լևոն Հախվերդյան

41. Ո՞վ է «Զրույցներ բանաստեղծի հետ» գրքի հեղինակը:

ա. Հարություն Հովնաթան

բ. Գուրգեն Մահարի

գ. Լևոն Մկրտչյան

42. Համո Սահյանի եւ Գարսիա Լորկայի պոետական աշխարհների միջեւ առկա ներքին աղերսների մասին խոսել է

ա. Էդուարդաս Մեժելայտիսը

բ. Կայսին Կուլիևը

գ. Լև Օզերովը

43. Համո Սահյանի անձնագրային անուն-ազգանունն է
ա. Հմայակ Գրիգորյան
բ. Հմայակ Սահակյան
գ. Հմայակ Սահյան

44. Հ. Սահյանի ծննդավայրի դպրոցում 1915-1916 ուսումնական տարում աշխատել է մեծ գրող
ա. Եղիշե Չարենցը
բ. Ակսել Բակունցը
գ. Ավետիք Իսահակյանը

45. Ո՞ր թվականին է Հ. Սահյանը մեկնում Բաքու, որտեղ էլ Ստեփան Շահումյանի անվան հայկական դպրոցում ստանում է միջնակարգ կրթություն:
ա. 1937
բ. 1927
գ. 1921

46. Հ. Սահյանը ո՞ր թվականին է ընտանիքով Բաքվից տեղափոխվում Երևան, որից հետո կյանքն ու գործունեությունը ընդմիշտ կապում է հայրենիքի հետ:
ա. 1951
բ. 1954
գ. 1963

47. Ո՞ր տարբերակն է ճիշտ:
ա. Համո Սահյանն աշխատել է «Ավանգարդ» թերթում, «Ոգնի» հանդեսում:
բ. Համո Սահյանն աշխատել է «Գրական թերթ»-ում:
գ. Բոլոր տարբերակները ճիշտ են:

48. Ո՞ր տարբերակն է ճիշտ:

ա. Համո Սահյանը մահացել է 1993 թ. հուլիսի 17-ին:

բ. Համո Սահյանը մահացել է 1993 թ. հուլիսի 17-ին ավտովթարից:

գ. Բոլոր տարբերակները ճիշտ են:

49. Ո՞ր ժողովածուից է հետևյալ քառատողը:

Գնանք օտարի դռները բախենք,
Թերմացքներ մուրանք, որ սովը թաղե՞նք…
Ավելի լավ չէ՞, որ մեզ ազգովի
Այս անկախության պարանով կախենք…

ա. «Սլացքի մեջ»

բ. «Հայաստանը երգերի մեջ»

գ. «Ինձ բացակա չդնեք»

50. Ո՞ր տարբերակն է ճիշտ:

ա. Համո Սահյանի բանաստեղծական արվեստը բարձր են գնահատել Կայսին Կուլիևը, Էդուարդաս Մեժելայտիսը, Լև Օզերովը:

բ. Համո Սահյանի բանաստեղծական արվեստը բարձր են գնահատել Սերգեյ Եսենինը, Գարսիա Լորկան, Պոլ Էլյուարը:

գ. Բոլոր տարբերակները ճիշտ են:

51. Ո՞ր տարբերակն է ճիշտ:

ա. Հ. Սահյանի պոեզիայում խորհրդանիշներ են դառնում քարը, քարափը, մասրենին, ժայռը, փշատենին:

բ. Հ. Սահյանի պոեզիայում խորհրդանիշներ են դառնում տրակտորը, զենքը, երկաթը:

գ. Բոլոր տարբերակները ճիշտ են:

52. Ո՞վ է հետևյալ տողերի հեղինակը. «Պոեզիան թարգմանել ես անգլերեն, պիտի անգլիացին իմանա՝ այդ երկրում ինչ ծառ է աճում: Անգլիացին պիտի կարդա եւ ասի՝ սա Հայաստանն է, որտեղ ապրում է ժամանակակից հայ մարդը»:

ա. Հովհաննես Թումանյանը

բ. Համո Սահյանը

գ. Վալերի Բրյուսովը

53. Ո՞ր տարբերակն է ճիշտ:

ա. Գրականագետ Շչորս Դավթյանը իր «Համո Սահյանի կյանքը և գործը» գրքում հերքում է Սահյանի պոեզիայում պանթեիզմի գոյությունը:

բ. Գրականագետ Մելս Սանթոյանը փաստում է, որ Համո Սահյանի պոեզիայում դրսևորվում է պանթեիզմի նոր որակը՝ սահյանականը:

գ. Բոլոր տարբերակները ճիշտ են:

54. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա. Մասրենին խորհրդանշում է հայ ժողովրդի կենսունակությունը:

բ. Մասրենին խորհրդանշում է չար մարդու տեսակը:

գ. Բոլոր պնդումները ճիշտ են:

55. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա. Սահյանի պոեզիան ներկայանում է աշխարհն ազնվացնելու մղումով:

բ. Սահյանի պոեզիայում գերակա են հումանիզմի շեշտադրումները:

գ. Բոլոր պնդումները ճիշտ են:

56. Ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուներից:

ա. «Առագաստ»

բ. «Հուշարձան մայրիկիս»

գ. «Մանկություն»

57. Ո՞ր տողերն են պատկանում Հ. Սահյանին:

ա. Թափառում ենք փողոցներում
Ես քո սիրով, դու՝ ուրիշի…

բ. Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ…

գ. Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր…

58. Նշված տողերից որի՞ հեղինակն է Համո Սահյանը:

ա. Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ…

բ. Մեր տան պատից մի քար լիներ,
Նստեի վրան
Ու պատմեի անտուն կյանքիս
Հեքիաթը նրան:

գ. Բոլորի:

59. Նշվածներից ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծական ժողովածուն:

ա. «Ծիածանը տափաստանում»

բ. «Տափաստանի գայլը»

գ. «Ծիածանագույն լեռներ»

60. Նշվածներից ո՞րն է Հ. Սահյանի բանաստեղծական ժողովածուներից:

ա. «Կռունկ, ուստի՞ կուգաս»

բ. «Կանչէ, կռունկ»

գ. «Կռունկ, հայրենիքես խաբրիկ մը չունի՞ս»

4. Թեստերի պատասխաններ

N		N		N		N	
1	բ	16	բ	31	ա	46	ա
2	ա	17	ա	32	բ	47	գ
3	բ	18	գ	33	գ	48	ա
4	բ	19	բ	34	ա	49	գ
5	գ	20	գ	35	գ	50	ա
6	բ	21	գ	36	ա	51	ա
7	գ	22	ա	37	բ	52	բ
8	բ	23	բ	38	գ	53	գ
9	գ	24	ա	39	բ	54	ա
10	գ	25	ա	40	ա	55	գ
11	բ	26	ա	41	գ	56	ա
12	ա	27	գ	42	գ	57	բ
13	ա	28	բ	43	ա	58	գ
14	բ	29	ա	44	բ	59	ա
15	ա	30	ա	45	բ	60	բ

5. Ինքնաստուգման հարցաշար

1. Ի՞նչ է նշանակում պանթեիզմ:
2. Ովքե՞ր են եղել պանթեիզմի խոշոր տեսաբանները փիլիսոփայության մեջ:
3. Ինչպե՞ս է արտահայտվում պանթեիզմը գրականության մեջ:
4. Ի՞նչ աղերսներ ունի Հ. Սահյանի պոեզիան պանթեիզմի հետ:

5. Որտե՞ղ է ծնվել Համո Սահյանը, ի՞նչ նշանակություն ունեցավ ծննդավայրի բնաշխարհը նրա ստեղծագործական կյանքում:
6. Բնաշխարհի ի՞նչ աշխարհագրական տեղանունների ենք հաճախ հանդիպում Հ. Սահյանի պոեզիայում:
7. Ո՞րն է Հ. Սահյանի բնապաշտական պոեզիայի բովանդակային հիմնական հենքը:
8. Ինչպիսի՞ հարաբերության մեջ են մարդն ու բնությունը Հ. Սահյանի պոեզիայում:
9. Ո՞րն է Համո Սահյանին հռչակ բերած առաջին բանաստեղծությունը: Որտե՞ղ և ինչպե՞ս է գրել այն:
10. Ո՞ր հայ գրողը առաջինը ողջունեց Համո Սահյանի մուտքը գրական աշխարհ:
11. Ո՞ւմ խմբագրությամբ լույս տեսավ Հ. Սահյանի առաջին գիրքը:
12. Ո՞րն է Հ. Սահյանի առաջին տպագրված ժողովածուն և ո՞ր թվականին այն լույս տեսավ:
13. Որո՞նք են Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուները, թվարկել՝ ըստ տպագրության ժամանակագրության:
14. Ի՞նչ նշանակություն ունի բնությունը Հ. Սահյանի պոեզիայում:
15. Բերել բնության պաշտամունքի գեղարվեստական օրինակներ Հ. Սահյանի պոեզիայից:
16. Ի՞նչ բառ-խորհրդանիշների ենք հանդիպում Հ. Սահյանի բնապաշտական երկերում:

17. Ի՞նչ են խորհրդանշում մասրենին, քարը, քարափը Հ. Սահյանի պոեզիայում, բերել օրինակներ բնագրերից:
18. Որո՞նք են Հ. Սահյանի պոեզիայի պատկերավորման համակարգի հիմնական առանձնահատկությունները:
19. Ովքե՞ր են խոսել գույնի՝ որպես Հ. Սահյանի պոեզիայի պատկերավորման համակարգում գեղագիտական միավոր լինելու առանձնահատկությունից:
20. Ի՞նչ աղերսներ կան Հ. Սահյանի պոեզիայի և ժողովրդական բանահյուսության միջև:
21. Ո՞ր ռուս գրողների գործերից է հայերեն թարգմանել Համո Սահյանը:
22. Արտասահմանյան ո՞ր հեղինակների գործերից է հայ ընթերցողի համար թարգմանություններ կատարել Համո Սահյանը:
23. Թարգմանության մասին ի՞նչ տեսակետ է հայտնել Հ. Սահյանը:
24. Որո՞նք են բանաստեղծի աշխարհընկալման առանձնահատկությունները:
25. Որո՞նք են Հ. Սահյանի բանաստեղծական մտածողության և պատկերակերտման գեղագիտական յուրահատկությունները:
26. Անձնական կյանքն ինչպե՞ս է արտահայտվել նրա գեղարվեստական գործերում:
27. Կյանքի և գործունեության ի՞նչ կարևոր դրվագներ են որոշիչ նշանակություն ունեցել նրա ստեղծագործական կյանքում:

28. Լրագրողական գործունեության ընթացքում ո՞ր թերթերին ու ամսագրերին է աշխատակցել:
29. Իմաստասիրական ի՞նչ հիմնական շերտեր կան Հ. Սահյանի բնապաշտական ստեղծագործություններում:
30. Հայրենիքի առջև ծառացած ի՞նչ խնդիրներ է արծարծել Հ. Սահյանն իր պոեզիայում:
31. Հ. Սահյանի պոեզիայում ի՞նչն է մարդուն ազնվացնող երևույթ համարվում:
32. Հ. Սահյանն ու՞մ հետ է կապում իր հոգևոր ակունքները:
33. Ի՞նչ առնչություններ կան Հ. Սահյանի, Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի ստեղծագործությունների միջև:
34. Ի՞նչ աղերսներ կան Հ. Սահյանի և Ս. Եսենինի ստեղծագործությունների միջև:
35. Ի՞նչ ընդհանրություններ կան Հ. Սահյանի և Գարսիա Լորկայի ստեղծագործությունների միջև:
36. Հ. Սահյան և Հովհ. Թումանյան. ցույց տալ աղերսները:
37. Հայրենի տան պատկերն ինչպե՞ս է արտահայտվում Հ. Սահյանի պոեզիայում:
38. Ցույց տալ հայրենի տան պատկերի գեղարվեստական խտացումը Հ. Սահյանի և այլ գրողների ստեղծագործություններում, խոսել գեղարվեստական յուրահատկությունների մասին:
39. Հ. Սահյանի բնապաշտական երկերում ցույց տվեք բնության պատկերների և մարդկային զգացմունքների կապը:

40. Ինչպե՞ս է բնապաշտությունը դառնում արժեհամակարգի ձևավորման կողմնորոշիչ: Բերել օրինակներ:

41. Ի՞նչ ազգային և համամարդկային արժեքներ են ընկած Հ. Սահյանի պոեզիայի գաղափարական հիմքում:

42. Հայ ավանդական ընտանիքի պատկերը ո՞ր բանաստեղծություններում է արտահայտել: Բերել օրինակներ:

43. Ո՞վ է Խաչիպապը, և ի՞նչ է խորհրդանշում:

44. Ինչի՞ անվանումներ են Գյազբելը, Աղոթարանը, Սալվարդը:

45. Ցույց տալ Հ. Սահյանի բանաստեղծություններից օրինակներ, որտեղ տեսնում ենք բնության բանականացման, մարդկայնացման երևույթներ:

46. Ինչպիսի՞ էվոլյուցիա է ունեցել սերը Հ. Սահյանի պոեզիայում՝ բանաստեղծությունից բանաստեղծություն, շարքից շարք:

47. Ի՞նչ տեղ ու դեր ունի հայրենիքը Հ. Սահյանի պոեզիայում: Բերել օրինակներ Հայաստանին նվիրված ստեղծագործություններից:

48. Ինչպե՞ս է արտահայտվել մայրական սերը Հ. Սահյանի պոեզիայում: Բերել օրինակներ:

49. Ինչպե՞ս է բնության միջոցով բացահայտվում մարդու ներաշխարհը: Բերել օրինակներ, որտեղ բանաստեղծը բնության միջոցով մեկնում է մարդկային էությունը:

50. Ո՞րն է Համո Սահյանի նորարարությունը հայ գրականության մեջ:

51. Ինչպե՞ս է Համո Սահյանը իր պոետական աշխարհում համադրել նորն ու ավանդականը:
52. Որո՞նք են Հ. Սահյանի պոեզիայի պատկերավորման առանձնահատկությունները:
53. Որո՞նք են բանաստեղծի խոհափիլիսոփայության շարժառիթները, և ինչի՞ն է դիմում այն գեղարվեստորեն արտահայտելու համար:
54. Բնութագրել Հ. Սահյանի պոեզիայում հումանիզմի գեղարվեստական դրսևորման շեշտադրումները և բերել օրինակներ:
55. Բնութագրել Կոմիտասի կերպարը Հ. Սահյանի համանուն բանաստեղծությունում:
56. Պատմական ի՞նչ ժամանակներ են գեղարվեստորեն արտահայտվել Հ. Սահյանի ստեղծագործություններում:
57. Ի՞նչ հիմնական տրամադրություններ են գերիշխում Մեծ հայրենական պատերազմի տարիներին գրված ստեղծագործություններում:
58. Ի՞նչ հիմնական տագնապներ են առկա խորհրդային տարիներին Հ. Սահյանի գրած ստեղծագործություններում:
59. Ղարաբաղյան շարժմանն ու ազգային-ազատագրական պատերազմին Հ. Սահյանն ինչպե՞ս է արձագանքել: Բերել նշված թեմայով գրված բանաստեղծության օրինակ:
60. Հ. Սահյանի ո՞ր ժողովածուում է ամփոփված հետևյալ քառատողով բանաստեղծությունը.

Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի,…

Սրա՞նք են այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մահս շտապի…

61. Հ. Սահյանի ո՞ր ժողովածուում է ամփոփված հետևյալ քառատողով բանաստեղծությունը.

Որտեղի՞ց այսքան ցավ ու թախիծ,-
Քարեր են փշրվում սրտիս վրա…
Գույժեր են գալիս Ղարաբաղից,
Սարեր են փշրվում սրտիս վրա…

62. Ե՞րբ է առաջին անգամ լույս տեսել «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն:

63. Ի՞նչ թեմաներով է հայրեններ գրել Հ. Սահյանը:

64. Ի՞նչ ընդհանրություններ կան քուչակյան և սահյանական հայրենների միջև:

65. Ո՞ր գրականագետն է խոսել Սահյանի պոեզիայում առկա պանթեիզմի նոր որակի՝ սահյանականի մասին:

66. Ո՞ր գրականագետն է հերքում պանթեիզմի գոյությունը Սահյանի պոեզիայում:

67. Ո՞վ է «Համո Սահյան. բանաստեղծը, մտածողը, մարդը» գրքի հեղինակը: Համառոտ բնութագրել աշխատությունը, ներկայացնել տեղեկություն հեղինակի մասին:

68. Ո՞վ է «Խոսում, խոսեցնում է Համո Սահյանը» գրքի հեղինակը: Համառոտ բնութագրել աշխատությունը, ներկայացնել տեղեկություն հեղինակի մասին:

69. Ո՞վ է «Զրույցներ բանաստեղծի հետ» գրքի հեղինակը: Ու՞մ մասին է գիրքը, և ի՞նչ բովանդակություն ունի:

70. Խոհափիլիսոփայական ի՞նչ ենթաշերտեր կան Հ. Սահյանի հայրեններում:

71. Ժամանակի ինչպիսի՞ դրամատիկ շեշտադրումներ կան Հ. Սահյանի բնապաշտական երկերում:

72. Ազգային ինքնության պահպանմանն ուղղված թեմաների արտահայտությունը ո՞ր բանաստեղծություններում է դրսևորվում: Բերել օրինակներ:

73. Խորհրդային տարիներին դատարկվող, ավերակվող հայրենիքի, հայրենի տան պատկերները ո՞ր բանաստեղծությունների մեջ է արտահայտված: Բերել օրինակ:

74. Բերել հայոց լեզվին նվիրված բանաստեղծության օրինակ:

75. Առանձնացնել բանաստեղծություն, որտեղ ասելիքի արտահայտման գեղարվեստական միջոց է դառնում գույնի կիրառությունը:

76. Առանձնացնել բանաստեղծություն, որտեղ ասելիքի արտահայտման գեղարվեստական միջոց է դառնում բույրի կիրառությունը:

77. Առանձնացնել բանաստեղծություն, որտեղ ասելիքի արտահայտման գեղարվեստական միջոց են դառնում ձայնը, շշուկն ու շրշյունը:

78. Ե՞րբ է առաջին անգամ լույս տեսել Հ. Սահյանի «Որոտանի եզերքին» բանաստեղծությունների ժողովածուն:

79. Ո՞ր հայ գրողներն են անդրադարձել Կոմիտասի կերպարին: Ինչո՞վ է առանձնանում սահյանական Կոմիտասը:

80. Ի՞նչ է խորհրդանշում մասրենին Հ. Սահյանի պոեզիայում:
81. Ի՞նչ է խորհրդանշում քարը Հ. Սահյանի պոեզիայում:
82. Ի՞նչ է մարմնավորում քարափը Հ. Սահյանի պոեզիայում:
83. Գերդաստանի, տոհմի, ընտանիքի մեծարման գաղափարը Հ. Սահյանի ո՞ր բանաստեղծությունների հիմքում է ընկած: Բերել օրինակ:
84. Ի՞նչ է խորհրդանշում մանկությունը Հ. Սահյանի պոետական աշխարհում:
85. Բնութագրել պապի կերպարը՝ ըստ Հ. Սահյանի բանաստեղծությունների:
86. Ըստ Հ. Սահյանի՝ մարդն իր կորցրած ազնվությունն ինչպե՞ս կարող է վերագտնել:
87. Ի՞նչ է խորհրդանշում կապույտ գույնը Հ. Սահյանի պոեզիայում, և ի՞նչ է ասել նա այդ առնչությամբ:
88. Ի՞նչ ընդհանրություններ կան Հ. Սահյանի և Ակսել Բակունցի ստեղծագործությունների միջև:
89. Ցույց տալ բույրի՝ որպես գեղարվեստական հնարանքի կիրառման աղերսներ Համո Սահյանի և Սայաթ-Նովայի ստեղծագործություններում: Բերել օրինակ:
90. Ցույց տալ բույրի՝ որպես գեղարվեստական հնարանքի կիրառման աղերսներ Համո Սահյանի և Ակսել Բակունցի ստեղծագործություններում: Բերել օրինակ:
91. Հ. Սահյանի մանկության տարիների տպավորությունների մեջ ո՞ր հայ գրողի կերպարն է անջնջելի մնացել, ով դասավանդել է նրա ծննդավայրում:

92. Գյուղի ի՞նչն է իդեալականացնում իր ստեղծագործություններում Հ. Սահյանը:
93. Մանկության տարիների տպավորություններն ի՞նչ նշանակություն ունեցան Հ. Սահյանի համար:
94. Որտե՞ղ է միջնակարգ կրթություն ստացել Հ. Սահյանը:
95. Որտե՞ղ է բարձրագույն կրթություն ստացել Հ. Սահյանը:
96. Մեծ Հայրենական պատերազմի տարիներին որտե՞ղ էր Հ. Սահյանը:
97. Ո՞ր թվականին և ո՞ր գրքի համար է Հ. Սահյանին շնորհվել ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկրի կոչում:
98. Ե՞րբ է մահացել Համո Սահյանը:
99. Պատմական ի՞նչ ժամանակների գեղարվեստական խտացումն է պատկերել Հ. Սահյանն իր «Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունում:
100. Հայրենիքի խորհրդանիշը բնաշխարհի ի՞նչ պատկերներով է արտահայտել Հ. Սահյանը:

6. Քննական հարցաշարի օրինակ

1. Համո Սահյանը՝ բնապաշտ գրող:
2. «Պանթեիզմ» հասկացությունը, նրա դրսևորումները փիլիսոփայության և գրականության մեջ:
3. Հ. Սահյանի բանաստեղծական աշխարհընկալումը, յուրահատկությունը:
4. Հ. Սահյանի գեղագիտությունը:
5. Հայրենիքը՝ Հ. Սահյանի բնապաշտական երկերում:

6. Բնությունը՝ որպես հայրենաճանաչման և մարդկային ներաշխարհի մեկնության միջոց:
7. Հայաստանի պատմական ճակատագիրը Հ. Սահյանի ստեղծագործություններում:
8. Ժամանակի տագնապները Հ. Սահյանի բնապաշտական երկերում:
9. Մարդու ինքնաճանաչման իմաստասիրական շերտերը բնության միջոցով:
10. Մարդու և բնության հարաբերությունը:
11. Բնությունը՝ մարդուն ազնվացնող երևույթ:
12. Մարդու և բնության հարաբերությունը՝ որպես արժեհամակարգի ձևավորմանը նպաստող ցուցիչ:
13. Բառի գեղագիտությունը:
14. Գույնը, բույրը, ձայնը՝ Հ. Սահյանի բնապաշտական երկերում որպես գեղագիտական միավորներ:
15. Բառ-խորհրդանիշները Հ. Սահյանի պոեզիայում:
16. Հ. Սահյանը և գրական առնչությունները:
17. Նորի և ավանդականի համադրումը Հ. Սահյանի պոետական աշխարհում:
18. Հ. Սահյան և ռուս գրականություն առնչությունները:
19. Հ. Սահյան և Գարսիա Լորկա. գրական աղերսներ:
20. Համո Սահյանը և թարգմանական արվեստը:
21. Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուները:
22. Համո Սահյանի պոետիկայի առանձնահատկությունները:
23. Հայրենիքի պատմական ժամանակի գեղարվեստական արտացոլումը Հ. Սահյանի պոեզիայում:

24. Հ. Սահյանի բնապաշտական պոեզիան՝ որպես հայրենիքի առջև ծառացած խնդիրների արձագանք:
25. Հ. Սահյանի բնապաշտական պոեզիայի արդիական ընկալումները:
26. Գրականագիտությունը՝ Հ. Սահյանի մասին:

Հավելված1

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուների ցանկ

ՀՀ	Անվանում	Հրատարակման թվական	Էջ. քանակը	Տպաքանակը
1	Որոտանի եզերքին	1946	63	3000
2	Առագաստ	1947	95	3000
3	Սլացքի մեջ	1950	91	3000
4	Ծիածանը տափաստանում	1953	140	3000
5	Բարձունքի վրա	1955	219	5000
6	Նաիրյան դալար բարդի	1958	320	5000
7	Հայաստանը երգերի մեջ	1962	459	5000
8	Մայրամուտից առաջ	1964	216	7000
9	Բանաստեղծություններ հ. Ա	1967	428	10000
10	Քարափների երգը	1968	183	15000
11	Բանաստեղծություններ հ. Բ	1969	256	10000
12	Տարիներս	1970	410	5000
13	Սեզամ, բացվիր	1972	280	20000
14	Կանչե, կռունկ	1973	440	15000
15	Երկերի ժողովածու հ. 1	1975	496	10000
16	Երկերի ժողովածու հ. 2	1976	508	10000

17	Իրիկնահաց	1977	308	15000
18	Зови, журавль	1977	182	10000
19	Ժայռից մասուր է կաթում	1979	172	10000
20	Կանաչ-կարմիր աշուն	1980	236	20000
21	Տոհմի կանչը	1981	384	20000
22	Երկեր հ. 1	1984	392	30000
23	Երկեր հ. 2	1984	440	30000
24	Դաղձի ծաղիկ	1986	214	15000
25	Лирика	1989	248	25000
26	Աստվածս՝ ցորենին ասեմ	1998	60	1000
27	Ինձ բացակա չդնեք	1998	171	1000
28	Հատընտիր	2001	212	1000
29	Ինձ բացակա չդնեք	2003	178	1000
30	60 ու 1 հայրեն	2003	132	500
31	Արցունքով լվացված սերեր	2004	150	1000
32	Քարե պատարագ, հատընտիր	2009	659	500
33	Երկեր չորս հատորով, հ. Ա	2011	407	500
34	Համո Սահյան. ընտրանի	2012	272	300

(«Սյունյաց երկիր», N6 (314), 2014)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղաբաբյան Ս., 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, գ. 2-րդ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984:

2. Աղաբաբյան Ս., Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1982:

3. Բակունց Ա., Ալպիական մանուշակ, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1969:

4. Գասպարյան Դ., Համո Սահյան, Երևան, 2004:

5. Դավթյան Շ., Համո Սահյան, Բանաստեղծը, Մտածողը, Մարդը, «Վան Արյան», Երեւան, 2001:

6. Դավթյան Շ., Համո Սահյան բանաստեղծի հավատամքը, «Ոսկան Երեւանցի» հրատարակչություն, Երեւան, 2004:

7. Ընտիր էջեր ռուս սովետական պոեզիայի, Հայպետհրատ, Երեւան, 1963:

8. Թոփչյան Ս., Անհունի անդրադարձը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1982:

9. Թոփչյան Ալ., Բառի սահմանները, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1978:

10. Թումանյան Հ., Երկերի ժողովածու 4 հ.-ով, հ. 4, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1969:

11. Կոմիտաս, բանաստեղծություններ, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1969:

12. Հակոբյան Ս., Փիլիսոփայության տեսություն և պատմություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երեւան, 2009:

13. Հայրապետյան Ա., Բնությունը և մարդը Համո Սահյանի պոեզիայում, «Լույս» հրատարակչություն, Երեւան, 1974:

14. Հայրապետյան Ա., Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1977:

15. Հայրեններ, «Նաիրի» հրատարակչություն, Երեւան, 1994:

16. Հովնաթան Հ., Խոսում, խոսեցնում է Համո Սահյանը, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 2014:

17. Մկրտչյան Վ., Համո Սահյանի բանաստեղծական բնափիլիսոփայությունը, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան:

18. Մկրտչյան Լ., Զրույցներ բանաստեղծի հետ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984:

19. Չարենց Ե., Ընտիր երկեր, Երեւան, 1997:

20. Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. 4, ՀՍՍՀ գրահրատարակչություն, Երեւան, 1968:

21. Զրբաշյան էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, «Լույս» հրատարակչություն, Երեւան, 1980:

22. Զրբաշյան էդ., Գրականագիտության ներածություն, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 1996:

23. Զրբաշյան էդ., «Գրականության տեսություն», Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 1980:

24. Սահյան Հ., Երկեր, հ. 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984:

25. Սահյան Հ., Երկեր, հ. 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1984:

26. Սահյան Հ., Տոհմի կանչը, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1981:

27. Սահյան Հ., Ինձ բացակա չդնեք, «Վան Արյան», Երեւան, 1999:

28. Սահյան Հ., Հայաստանը երգերի մեջ, «Հայպետ-հրատ», Երեւան, 1962:

29. Սահյան Հ., Սեզամ, բացվիր, «Հայաստան» հրատա-րակչություն, Երեւան, 1972:

30. Սահյան Հ., Ինչ էլ լինի, կգամ, «Զանգակ-97», Երեւան, 2004:

31. Սահյան Հ., Դաղձի ծաղիկ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1986:

32. Սահյան Հ., Երկերի ժողովածու, հ. Ա, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1967:

33. Սահյան Հ., Քարե պատարագ, Հատընտիր, «Նաիրի» հրատարակչություն, Երեւան:

34. Սեւակ Պ.,Անլռելի զանգակատուն: Պոեմ: «Խորհրդա-յին գրող», Երեւան, 1990:

35. Սեւակ Պ., Երկեր, հատոր 6, «Հայաստան» հրատա-րակչություն, Երեւան, 1976:

36. Սողոմոնյան Ս, Ժամանակակից հայ բանաստեղծներ, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան, 1967:

37. Սովետահայ գրականության պատմություն, հ.2, Երևան, 1967:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. https://hy.wikipedia.org
2. https://ru.wikipedia.org
3. http://granish.org
4. http://life.panorama.am/hy/news/2013/12/03/hamo-sahyan/48967
5. http://filosof.historic.ru/
6. http://www.philology.ru/
7. http://www.lib.ru/

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԻՆԵ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՌԱՋՅԱՆ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԸ ԵՎ ՊԱՆԹԵԻԶՄԸ

(Ստորագույն շրջանի հայ գրականություն)

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Խմբագիր՝ Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Էվելինա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝ Լիլյա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հանձնված է տպագրության՝ 03. 10. 2019 թ.:

Ստորագրված է տպագրության՝ 15.10.2019 թ.:

Ծավալը՝ 6.5 տպ. մամուլ:

Տպաքանակ՝ 100:

ԱրՊՀ հրատարակչություն, Ստեփանակերտ, Մ.Գոշի 5
E-mail: printery.asu@mail.ru

ԱՐՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ